Ժողովը ուրիշ խնդիրներու կարգին քննութեան առած է Մայր Աթոռի 1927 տարւան պիւտձէն, որմէ կը պարզուի թէ էջմիածնի բաց պիտի ունենայ 23,400 ուղբի: Այս գումարէն համաժողովներու սանձամբներու թեմական խորհուրդները յանձն առած են 7400 ուղբի լրացնել իրենց թեմական եկամուտներէն, իսկ մնացած 16 հազար ուղբի բացին համար ժողովը ցանկութիւն յայտնած է որ արտասահմանի հայ թեմերը աշխատին լրացնել, իրենց եկամուտներէն տարեկան որոշ գումար նշանակելով իբրեւ նպաստ Մայր Աթոռին:

ՄԵՔՐԵԳՈՐՈՒՄԸ ԳԵՒ 2:

Վ. Ե. Բ. Ը. Յ. Ը.

Էնկերի մէջ կիրքերը ղեռ չեն խաղաղած: Կարծուած է յանձնաժողով մը, որ ատենէ մը ի վեր քննութիւններ կը կատարէ ազգային պարագան ղեմ գործողներուն մասին: Պոլսոյ, Բոսնիոյ եւ Առաջնայի կուսակալութեանք բնակիչները մաղէ կ'անցնուին: Նկատի կ'առնուին նաեւ ընդդիմադիր թերթեր հրատարակողներն ու կարգադրողները: Անոնք չեն մնար Իսլամական Միութեանք անդամները եւ «Կոստիկ Կանա պատասխանող ինչաբըման եւ քաղաքակրթութեան ճամբան փակել ուղղողները»:

ՕՐԸ ՕՐԻՆ

ԳՐԾԱԶՐԿՈՒԹԻՒՆԸ ԱՆԵԼԻ ԾԱՆՐ Է ՓԱՐԻԶԻ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ

ՈՒՇԱԳՐԱԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բանւորութեան Ազգային Միայուն Խորհուրդը նիստ գումարեց առջի օր եւ զբաղեցաւ գործազրկութեան խնդրով: Հաստատուեցաւ որ գործազրկ չստացած գործի խնդրանքները աւելցրել են 1926ի չորրորդ եռամսեակին: Ամէնէն առաջ Փարիզի մէջ սկսած է տաքնապը, եւ Դեկտեմբերի վերջերը միայն գաւառները հասած: Զանք թափուած է օտար բանւորները Փարիզէն դուրս, եւ մեծ մասով աւելի քան 300 քիլոմետր հեռու տեղեր հաստատուել: Խորհուրդը վաւերացուց Աշխատանքի եւ Ներքին գործերու նախարարութեանց բրած կարգադրութիւնները, եւ որոշեց պահանջել որ հիւղողութեան նոր կայաններ հաստատուին հիւսիսային եւ արեւելեան սահմաններուն վրայ, օտար բանւորութեան մասին:

Փարիզի շրջանին մէջ, 20րդ թաղամասը, որ ամէնէն բազմամարդ կէտերէն մէկն է եւ ճարտարագործական կեդրոն, ամէնէն շատ գործազրկներու վկայական տուած է, աւելի քան 1300: Եւ օրական 60 հատ կ'աւելնայ այս թիւը: Անմիջապէս յետոյ կուգայ 11րդ թաղամասը, ուր միայն Յունուար 13ին բարեգործական գրասենեակը 50,957 ֆրանք բաշխած է 1063 հոգիի: Այստեղ ալ ամէն օր 50 նոր դիմում կ'արձանագրուի: Ամէնէն շատ ազդուած գործերն են կահագործութիւնը, զարդական կաշեգործութիւնը, տուփերու շինութիւնը եւ փոքր մետաղագործութիւնը: Յետոյ կարգով կուգան 19րդը, որ ունի 900 անգործ, 18րդը, 17րդը, 15րդը եւ 13րդը: Աւելորդ է ըսել թէ տրուած թիւերը կը վերաբերին միայն նպատարնկալ անգործներուն. անդին բազմաթիւ բանւորներ կան որ դիմում չեն բրած. այնպէս որ, միայն Այնի նահանգին մէջ անգործներու թիւը 25-30000էն պակաս չէ: Փարիզ քաղաքէն դուրս, Պիլանքուոյի, Լը Վալուայի, Մոնթրէյլի գործարաններն ալ ազդուած են տաքնապէն: Բայց ինքնաշարժի գործը, որ մահաւորապէս կարեւոր է առաջին երկու թաղերուն մէջ, երկարատեւ պայսպաններու պատճառաւ, բաղադրաբար քիչ ազդուած է: Եւ ամէնէն առաջ արձակուած են օտար բանւորները: Տեղաւորման եւ Աշխատանքի վիճակագրութեան գրասենեակը կը հաղորդէ թէ հատուցման պայմանագիրներու համաձայն, օտարականներուն ալ գործազրկութեան նպաստ տրուած է: Յունուարէն առաջ նպաստի սակն էր օրական 2.75, իսկ այժմ շաբաթական 35 ֆր. է մէկ մարդու համար, 50 ֆր. երկու մարդու համար, 66.50 երեքի, 82.25 չորսի համար եւլն: Այս դրութեան շնորհիւ, բազմաթիւ ֆրանսացի բանւորներ կրնան պահել իրենց գործը:

Ինչպէս զրած էր Բանի (Caen, Բալվատոսի նահանգ) մեր թղթակիցը, գործազրկութիւն չկայ այդ շրջանին մէջ: Ֆրանսական թերթերն ալ հաստատելով այս տեղեկութիւնը, կ'աւելցնեն որ առեւտրական գործերու թուրքութիւնը պատճառ եղած է որ աշխատավարձերը զեղուցին կարգ մը ճարտարագործութեանց մէջ (կօշիկ են): Իսկ մետաղագործարանները եւ նաւարանները չեն կրնար հասնիլ ապսպաններուն: Այնթ-Անտոնի երկաթի հանքերն ալ սովորականին պէս կը բանին եւ նոյն իսկ նոր հաստատութիւն մը պիտի բանան: Այս իրողութիւնէն խրատուուելով, բազմաթիւ ֆրանսացի եւ օտար բանւորներ կը համարեն Փարիզէն եւ ուրիշ նահանգներէն: Վախ կայ որ կարելի չըլլայ բոլորն ալ գոհացնել: Կը խորհուի մէկ մասը երկրագործական աշխատանքներու յատկացնել:

Փարիզեան շրջանի սենտիքաներու միութիւնը մամուաւոր պատուիրակութիւն մը զրկեց Այն-է-Ուաղի նահանգապետին, օգնութիւն խնդրելով գործազրկներուն համար: Նահանգապետը յայտնեց թէ համաձայն է որ՝ 1. բոլոր գործազրկները առանց բացառութեան արձանագրուին գործազրկութեան ցանկին մէջ. 2. Յանձնաժողովներ կազմուին բոլոր համայնքներուն մէջ. 3. օտար գործազրկներն ալ վայելին այն իրաւունքները զորս ունին քրանսացիները:

Աշխատանքի նախարարութեան տեղեկագրէն կ'իմանանք թէ վերջին շաբաթուան ընթացքին Ֆրանսա եկած են 697 օտար բանւորներ, իսկ մեկնած են 1028 հոգի (մեծ մասով իտալացի, սպանիացի եւ պոլոն): Նորեկներէն եւ արդէն Ֆրանսա գտնուած օտարներէն տեղաւորուած են 349 իտալացի, 263 լեհ, 90 չին, 68 ռուս, 63 սպանիացի, 31 յոյն, 29 փորթուկէց եւ 131 ցանազան ազգէ բանւորներ:

Աշխատանքի նախարարութեան շաբաթական տեղեկագրին համաձայն, մինչեւ 13 յունուար 1927, նպաստ տրուած է 27,952 բանւորի, որոնց 21,089ը այր, 5863ը կին: Անցեալ շաբաթուան ընթացքին նպատարնկալ գործազրկներուն թիւը կը հասնէր 17,178ի, այնպէս որ այս շաբաթ 10,000է աւելի բանւորի նպաստ տրուած է:

Յունուար 12ին, Փարիզ քաղաքին գործազրկութեան օգնութեան կոմիտէն նպաստ տուած է 14,558 բանւորի, որոնց (Լուրերու շարունակութիւնը կարգալ Գ. էջ)

ԳՐԾԱԶՐԿՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԱՍՍՏԱՆԱՅ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Լիոնի մեր թղթակիցը կը գրէ Յունուար 14 թուականով. —

Գործազրկութիւնը սկսաւ խոշոր համամասութիւններ ստանալ: «Պէտլէ» օթոյի հսկայ գործարանը, որ 8000 բանւոր ունի, երկու օր առաջ 800էն աւելի գործաւոր արձակեց, որոնց մէջ կան եւ Հայեր: Շատեր ընտանիքի հայրեր են եւ առաջին օրէն իսկ անելի մասնուած: Իսկ Մոնթրէյլի գտնուող նոյն «Պէտլէ»ի մամուալներն ալ սկսած է շաբաթական 50էն 100 գործաւոր արձակել: Շուկիներ կան նաեւ թէ 3000էն միայն 300 գործաւոր պիտի ձգեն: Մետաքսի գործարաններէն «Ժիլէն» ալ պղտիկ պատրուակներով օրական քանի մը տասնեակ կ'արձակէ, մամուաւորաբար օտարներ: Ուրիշ շատ մը գործարաններ աշխատութեան ժամերը կրճատած են 30-40ի:

Մեր հայրենակիցներէն շատեր կը գըջան որ խարուկով «ամառներու փալլուն» «Նէքլա»-ներէն, քաւութեան նիւսող դարձան այս օտար փեղկուն վրայ: Շատ մը հայրենակիցներ վաղուան հեռանկարէն մտահոգ խնայողութեանը կ'ապրին. ստուգէ զրկելով սենեակի վարձը կը վճարեն եւ ֆիզիքապէս կը սպաւարանան: Այս օրերս նոր աւանակալ մըն ալ ստեղծուած է մէկ սենեակէն միւսը փոխադրուելու համար, աշխատութեան վկայական կը պահանջեն: Զուտեցողներ կը զրկուին ուրիշ աւելի նպաստաւոր սենեակ մը վարձելու պատահութիւնէն: Շիբակի աղետահաններու հանգանակութեան մամուակողներէն շատեր կը տրտնջան թէ մեքէ անոնց օգնելուք, հապա մեք ո՛վ պիտի օգնէ...:

ՊՈՒՇԱԳՐԱԻ ԳԱՆԵՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Նիւ Եօքքի Ռոտիկուսապետ տեղեկացած է թէ պոլշեիկները 100,000 տոլար կ'աշխատեց տուած են ամերիկացի ոստիկաններուն, որպէս զի թող տան իրենց ազատօրէն գործել բանւորական շարքերուն մէջ եւ մամուաւորաբար ղեկավարել մուշտակի բանւորներուն վերջին գործազուրկ: Կաշառքները բաժնուած էին հետեւեալ կերպով. — Գնտիչ ոստիկան մը՝ շաբաթական կը ստանար 250 տոլար, հարիւրապետ մը՝ 100, տեղակալ մը՝ 50, գաղանի ոստիկան մը՝ 15, իսկ գործազուրկ շրջանին մէջ ռազմապիսական կէտ մը բռնող ոստիկանը՝ շաբաթը 5էն 50 տոլար:

Մուշտակի գործազուրկ տեւեց վեց ամիս, ամբողջ այդ շրջանին, պոլշեիկեան գործակալներու ղեկավարութեան տակ զէնը ու ցորեկ կուներ տեղի կ'ունենային դատաւր բանթողներու եւ կարմիրներու մէջ, որոնք առաջիններուն տունները մտնելով տակնուվրայ կ'ընէին կարասիները եւ կ'ընկեր կը նախատէին: Մուշտակի գործազուրկ Արեւմտահայկան Միութեան արժեք մօտ 800,000 տոլար:

Հայ երաժշտութիւնը անմե. լով. — Ուրբաթ կէսօրին «Ռատիօ-Փարի» անթիկի կայանէն յայտնի թաւ-Չութական Գ. Տիրան Ալեքսանեան նուագեց երկու հայերէն կտորներ (իւ հեղինակութիւնը). «Սորսուրդ խորին» եւ «Աղպկազ»:

### ՀԱՅ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

### ՎԵՐՆԱՏԱՆ ՄԷՋ

### ՕՏԱՐ ԵՐԿՐԻ ՄԷՋ

Կուսակցութիւնները արեւմտեան իմաստով դեռ չեն կազմաւորուած հայկական իրականութեան մէջ:

Արեւմտեան ամէն մի երկրում կան շարք մը կուսակցութիւններ, որոնցմէ իւրաքանչիւրը իր ընկերային-քաղաքական հասարակութեան որոշ խաւի մը վրայ: Այս, օրինակ, քրիստոնէական մէջ՝ արքայականներ, աշակերտեան հանրապետականներ, ծախակողմեան հանրապետականներ, ընկերակարգական հանրապետականներ, արմատական ընկերակարգականներ, պարզ ընկերակարգականներ եւ վերջապէս համայնականներ:

Հարկաւ, երբեմն այս կամ այն կուսակցութիւնը կ'ունենայ իր կազմին մէջ խորձ, օտար անդամներ. կը պատահի, օրինակ, որ խոշոր միլիոնատէր հարուստ մը — որի հոգիին մէջ փոքի հմայքը է մեռցուցած գաղափարական, ազնուական սերմերը — կը յայտնուի աշխատանքական կուսակցութեան շարքերում: Եւ նման դէպքեր շատ պատահին Ֆրանսիայ, Անգլիոյ, Գերմանիոյ, Ինքնիկայի մէջ: Բայց ասոնք սոսկ պատահական տարրեր են: Ինծի հարուստները աւստրալի կը համարուին որոշակի արհեստագործական դերակրողներ: Ֆրանսիայի մէջ անոնք կը յարկն աշակերտեան հանրապետական կուսակցութեան, չնչին մաս մըն ալ կը միանայ արքայականներու հատուածին, որ գրեթէ կորսնցուցած է վարկ ու արդեցումներ:

Կը պատահի նմանապէս, որ պարզ, գործաւոր անհատներ եւ գանգուածներ, անհող, անինչ պրոլետարներ կ'անդամագրուին իշխող, պահպանողական կուսակցութեան մէջ: Ասոնք ալ խաւար, անգիտակից տարրեր են, որ տակաւին չեն ըմբռնած իրենց դասային հարազատ շահերը:

Իր մէջ կուսակցութիւնները շատ աւելի բարդ, բազմապիսի խառնուրդներ են: Հակառակ որ հարիւր տարուան մշակոյթ ունինք — մամուլ, գրականութիւն եւ այլն — չեմ խօսիր հին շայատանի մասին) — հայ ժողովուրդին մէջ կուսակցութիւնները տակաւին ի ինքնուրուի են:

Համայնքը շատ քիչ է զանազանաւորուած եւ ինքը ամենաուժեղ ժողովրդական կուսակցութիւնը — Հ. Յ. կուսակցութիւնը: Թէ ինչ ունի բաւականաչափ մշակուած ծրագիր ու աշխարհայայտացք — կը պարունակէ իր բարդ ու հարուստ կազմին մէջ ստուար տարրեր, որոնք իրենց ընկերական դերով, իրենց ընկերային շահերու թելադրանքով, իրենց բովանդակ աշխարհայայտացքով աւելի շուտ կը պատկանին հայ ռամկավար կուսակցութեան եւ իրենց ճշմարիտ աղբիւր պիտի գտնէին այդ կուսակցութեան շարքերում:

Այդ տարկանումութեանց պատճառն այն է, որ հայ իրականութեան մէջ, տարբարակաբար, դեռ ազգային գոյութեան ու ազատագրութեան ցաւուն հարցերն են, որ ունին տիրական առաջնութիւն, ուստի եւ անգամ այն տարրերը, որոնք տրամաբանօրէն եւ բնականօրէն պէտք է մտնէին հայ ռամկավար կուսակցութեան մէջ, կը գերազանցեն մնալ Հ. Յ. կուսակցութեան շրջանակներում, վասնզի վերջինը իր ազգային-քաղաքական (ոչ ընկերային) ծրագրով եւ Յ. Յ. ամբողջովին նշանաբաններով աւելի կը համապատասխանէ այդ տարրերու գաղափարային տեսնանքներուն, քան ռամկավար կուսակցութիւնը, որ չունի անցեալ մը եւ աւանդութիւն մը եւ որ մինչեւ օրս, տարբարակաբար, անկարող եղաւ կազմակերպուելու, որպէս ինչ ու ազգային կուսակցութիւն՝ իր ուրոյն, ձեւակերպուած աշխարհայայտացքով:

Կ'ընենք — «տարբարակաբար»... Կաշնակցութիւնը վառ չունի հակակշիռ գաղափարական կուսակցութիւններէն: Ընդհակառակն՝ որքան աւելի գանազանաւորուի հայկեան համայնքը, որքան աւելի աճին, գործնական մեր հակառակորդ կուսակցութիւնները (խօսքս գաղափարական կուսակցութիւններու մասին է, ոչ թայֆաներու), այնքան աւելի բնականօրէն ընմաց պիտի աւնեն հայ ընկերային զարգացումը երկրում ու գաղութներում: Կուսակցութեան մը միանաւորութիւնը ունէ՛ր երկրի մէջ մայր է բազմապիսի չարքերն, բուն...

Կաշնակցութիւնը առհասարակ է՛ ձգտած միաստիարակութեան: Բայց եւ այնպէս մեր մտաւոր անցեալին մէջ պիտի կրնայինք թերեւս խուսափիլ շատ մը աղէտաւոր ծախողութիւններէ, եթէ հայ քաղաքական կեանքում փոքր ինչ աւելի ուժեղ ու ազդեցիկ եղած լինէին մեզի հայկաւակորդ կուսակցութիւնները՝ մտցնելու համար անհրաժեշտ հիւսարակները (անհրաժեշտ՝ որոշ պատմական վարկեաններում) միջկուսակցային իրականութեան մէջ:

Կաշնակցութիւնը վառ չունի հակակշիռ ուժերէն եւ կը բարձր, որ անոնք փնտրին ու զարգանան, դառնան աւտոդոն ու գործուն գաղափարական կուսակցութիւններ...

Եթէ մեզի վիճակուած է վերջի վերջը ինչն էլ շայտ պատմութեան բեմէն եւ իսպառ չբանալ հրապարակէն հակառակորդ ուժերու յարաձուգ գրոյցին տակ, — թո՛ղ կատարուի անխուսափելի... Ինչի կը մնայ միայն համակերպիլ ձակատագրին, տեղի տալ պատմութեան անդառնալի դատաւճիտին առջեւ:

Կը չբանան այն կուսակցութիւնները, որոնք այլ եւս հոգ չունին իրենց ուղիքն տակ, չունին գոյութեան իրաւունք, չեն յետադիմապահական ունէ՛ր խաւի, դասակարգի վրայ, չեն կատարել ունէ՛ր պաշտօնի հայ կեանքի յաւերժօրէն փոփոխակից յեղեղներուն մէջ:

Եթէ կաշնակցութիւնը իրօք այլ եւս ընելիք չունի, նա պիտի մեռնի ձակատագրով: Եւ ոչ մէկ կաշնակցական այնքան յիմար է, որ մտածէ, թէ հիւարաւոր է արուեստական միջոցներով պահպանել, մշտնջենաւորել կուսակցութեան գոյութիւնը...

Տասնեակ տարիներ այդ գոյութիւնը եղած է բնական ու բնականօրէն, բխած է կեանքի հրամայական պահանջներէն, աճած է, մեծցած ժողովրդի, երիտասարդութեան ինքնայորդոր աշակերտութեամբ, առանց նոյն իսկ գործադրելու — նախկին տարիներու մէջ — գրաւոր ու բանաւոր պրօպագանդի ու ազդեցիկային այնքան լայնամասշտիկ ձեւերը, որոնք յատուկ են ուրիշ երկրներու կուսակցութիւններուն, որոնք այնքան յարգի են մանաւանդ հայ քաղաքական, ոչ-կաշնակցական կուսակցութիւններու մէջ:

Եւ ոչ մէկ պատճառ կայ նախ, թողքիւն, թէ այդ բնականօրէն գոյութեան թելը այժմ մէկն է ի մէկ խզուցաւ եւ թէ գետինը սինգամ ընդմիջու սահեցաւ կուսակցութեան ոտքի տակէն: Ի՞նչ մէկ պատճառ՝ քանի որ այդ կուսակցութեան դերակր ինչ-չաճ է, նշանաբանները չեն հինցած, այլ կը պահպանեն, տարբարակաբար, մշտնջենաւոր այժմեակութիւն ու թարմութիւն մը...

Մ. Վ. ԱՐՄԵՆԻԱՆ (Հայրենիք)

Մէկ քանի գաւառացի եւ տեղացի ծանօթներ, այն տարին Պոլսի կը համախմբուէին Ռուբինեանի վերնատունը: Ըստնք էին բանասէր եւ հնաստ կարագետեանը, գրագէտ Սիմոնեանը, Բժ. Պաշլուաւունի, եւ փեթակեան որ Երմաշի վանքէն վանալիք մըն էր, գեղարարական բանաստեղծ:

Ըստնք նոյն օրը Ղալաթիոյ կրթական ժողովն էլ, ամէնը միտքին շփոթեցնելու ուղղակի վիպասան Ռուբինեանի տունը կ'երթան, ուր կը հիւրասիրուին ճաշով:

Երբու ժամ վերջը, վերնատան մէջ կը բացուէր անոնց լեզու: Տանուտէր Ռուբինեանը գրատունէն կը հանէր եւ ցոյց կուտար Հ. Ալիշանի «Հիբանք»: Հնաստ կարագետեանը իսկոյն նոյն գիրքը ձեռքն առած պերճարան առաջնորդի մը պէս նկարագրութիւնը կ'ընէր Բագրատունեանց մայրաքաղաքին այն ամէն պատմական կերպերուն որ այդ գրքին մէջ հրատարակուած էին: Պատկեր մը ցոյց տալով կ'ըսէր.

— Եսի Հոռոմոսի վանքն է. ասոր հարաւային կողմը կը գտնուի Ընիկ, հազար հինգ հարիւր մեկը ծովու երեսէն բարձր, քարածալութեան վրային նման, քարածալանակի մը վրայ: Երբեմնեան կողմը կ'իյնայ Դաղկոցաձորը, որուն մէջէն կը վազէ Արաքս վտակը:

Գրագէտ Սիմոնեան, տեղագրական պատմութեան այնքան հմտութիւն չունենալով, կարպետեանին կը հարցնէր.

— Ո՞ր թուականին կը սկսի այս Ընի մայրաքաղաքի պատմութիւնը:

Ըն կը պատասխանէր. — Ընծանօթ է հիմնարկութեան թուականը, սակայն յայտնի է որ հոս բնակած են մեր նահապետական հայկազունները, որոնք կառուցած են ամրոցներ, եւ քաղաքը առած է իր անունը Ընահիտ դիտուհիէն:

Փեթակեան, Ընահիտ անունն որ լսեց, տաղաչափական շեշտով այս տողերը արտասանէր.

— «Անահիտ տիկին մայր ամենայն զգաստութեանց, Որով կեայ եւ զկենդանութիւն կրէ երկիրն Հայոցը»:

Բժիշկ Պաշլուաւունի հեզնաժպիտ միջամտեց.

— Պարոն փեթակեան, երազներու թեւերով կը թրթռիս. ինչպէս կ'երկուի, ճրգատ արքայի աստեղագիրն Արաքսազեղոս խորագրով կը վրայ:

Կարպետեան անուշադիր անոնց, շարունակեց իր նկարագրութիւնը, եւ ցոյց տալով կիսակործան աշտարակ մը ըսաւ.

— Կը տեսնէ՞ք սա պատուհանը. ահա՛ ասկէ Ընծանօթի տիկինը թշնամիներուն նետերուն քաջարար կուրծք կուտար. եւ փառաւ Ամիրան սքանչացած անոր դիցազնութեան վրայ, զայն կուրծք իր արքունիքին մէջ մեծաշուք վարձատրել: Տեսէ՞ք սա գեղեցիկ պատկերը, ուր որոշակի կ'երեւայ Երեսնայ դուռը, ուսկից ներս խուժած է Արաքսի եղջերուն ուղղակի գունը եւ հաւածեր է պարսիկ շիւտէն խաւին բանալը: Իսկ այս միտ պատկերը կը ներկայանէ պարսպին աւագ դուռը, որուն երեք խաչերը կարմիր քարերով քանդակուած են. կարմիր են անոնք ինչպէս մեր երկրին որդան կարմիրը:

Գեղարարական բանաստեղծ փեթակեանը հարցուց.

— Մի՞թէ՛ այդ է այն դուռը

ուսկից Մուրադիկ անցնելով, երգեր է ճանթէի «Գժոխք»ի սահմաններէն վերադառնալով.

«Per me 'si va-della citta dolente.»

Հայկաբան եւ վիպասան Ռուբինեանը միջամտեց եւ ըսաւ.

— Հ. Արսէն Բագրատունին այդ տողը թարգմանած է այսպէս.

«Ընդ իս մուտք են ի քաղաքն արչաւոր»:

Սիմոնեան յուզուելով սխալ երգել.

«Անի քաղաք նստեր կուտայ...»:

Ռուբինեան կրկնեց հին առակը.

«Անի չէն, աշխարհս աւեր. Աշխարհս չէն Անիս աւեր»:

Եւ այս առակը կը մեկնեն այսպէս. թէ երբ Ընիկ չէն էր՝ բոլոր աշխարհս աւերակ կը համարուէր, երբ Ընիկ աւերակ կը դառնար, աշխարհս չէն կը դառնար:

Սիմոնեան կը հարցնէր.

— Պարոն Կարպետեան, ինչո՞ւ մեր ժողովուրդը երգում կ'ընէ Անիի հազարամէկ եկեղեցիներուն վրայ. մի՞թէ՛ այդ քան եկեղեցի եղած է հոն:

— Հատ փաստեր կան այդ մասին, սա միայն կրնամ յիշեցնել որ մեր պատմիչ Մատթէոս Ռուհայեցին, կ'աւանդէ որ Անիի ամէնէն ծաղիկալ շէն շրջանին «հազար եւ մէկ եկեղեցի ի պատարագի կայ յԱնի»: Բնականաբար «Բիւրք բերցոց» բազմամբողջ Ընեցիներուն համար քիչ կը համարուէին այդ քան եկեղեցիները: Ես երբ ման կուգայի այս աւերակներուն մէջ, կը տեսնեի ստորերկրային քաղաքի հետքերը: Հատ բնական էր որ բիւրաւոր բնակչութեան համար հարկաւոր էր ունենալ ներքնաքաղաք մըն ալ: Տակաւին յայտնի կը տեսնուին ներքնաքաղաքներ, ամէնէն մեծը կեղծուէն կ'երկնար մինչեւ Ասուրեան գետը: Ես ինչ որ տեսայ հոն, պարսպներն եւ ամէն շէնք մարմարի պէս սքրատաշ քարերով շինուած են, տիրող գոյններն են դեղինը եւ կարմիրը, դեղինը Տղմուտ գետին պէս ամբագոյն, իսկ կարմիրը նման ամէնուն գորմանայի ծաղիկն աղբերաց արին:

Ռուբինեան կը հարցնէր.

— Ո՞րն է այն եկեղեցին որուն մէջ խաչատուր Արովեան երկար ատեն յափշտակուած մնացեր եւ երգեր է իր Արաքսին քաջագործութիւնները:

— Ահա՛ պատկերը — Կարպետեան ցոյց կուտար — Ընիկ մայր եկեղեցին: Հոս թագաւորներ եւ հայրապետներ օծուել են: Եւս է կաթողիկէ Ս. Աստուածածին, զոր Աստղիկ այսպէս կը նկարագրէ: «Ամենապայծառ վայելք թեթեւութեամբ, բարձրաբերձ կամարով երկնամասն»: Եւս է հազարամէկ եկեղեցիներուն թագուհին: Ընոր մէջ, ատեն մը Վարդապետէն սկսեալ քառասուն օր պատարագ կը մատուցուէր տաճարի կառուցանող Կատարմիտէ զշնոյն հոգւոյն համար:

Վանալիք փեթակեանը ինքն իր մէջ ամփոփեցաւ, կարծես «հոգեցոյն հանգուցեց» մը կ'աւելցնէր նոյն զշնոյն հոգւոյն համար, երբեմնի այդ վանականին խղճին մէջ վանքի սարդի ոտտայնէն շատ բան էր մնացած: Իսկ Պաշլուաւունի կը հարցնէր Կարպետեանին.

— Ինչու Երովեան հոն յափշտակուած մնացեր էր:

— Բանաստեղծին «Վէրք Հայաստանի» վեպը կը վկայէ որ Բիւրաւորը Ընիկ բնակչութեան մեծ ջարդ մը տալէն վերջը, այդ եկեղեցույ մէջ խորուած ամէն

իմ վիշտը երբեք դուր չէ՛ք հասկնար, շատ է խորունկ ան. Կաղանիքն իմ ցաւիս, ծո՛ղն է անյատակ, ովիւրս մը անհո՛ւն. քանիդոյն իմ սրտիս, ո՛չ սկիզբ ունի, ո՛չ վերջ ու սահման. Թախի՛ծը հոգեւոյս կը տանջէ յաւէտ մարմինս իմ կըրքուն:

Արշալոյսն աղւո՛ր, առաջայն նըման է՛րբեւար ինձ վա՛ռ, Լոյսն արեգակին կանանց գարունի, ինձ խորձ է հիմա. Իրազիկներն ամէն, ծաղիկներ գոյն գոյն, չէն հոգեմիմայ, Ամէն ինչ մտարս, ու շուրջնս, հեռուն օտար են, օտար:

Վարդը է, կը զգամ բան մը սրտիս մէջ մարած յաւիտեան. իմ կրծքիս վրայ, պատեր է կարծես, սառուց մը անհալ. Իմերբը բոլոր կը թրւին ինձի մոխրաճոց, ունայն. Ո՛վ դուռն հոգիի մեծ Ուրախութիւն, մեռեր ես դո՛ւն ա՛լ...

Ս. ԱՐՄԵՆԻԱՆ

տեսակ պղծութիւն կը գործեն. բանաստեղծին Արաքսին իր ուղիք միջնորդ գանձը հոն կը մորթէ. եւ Մովսիսական «Անի ընդ ական» վրիճապետ օրէնքով լաւ դաս մը կուտայ անոնց:

— Պարոն Կարպետեան, կ'ըսէր Պաշլուաւունի, Արաքսին արիւն արիւնով լուացեր է. դիցազ մը պէտք է միշտ վեհանման ըլլայ, եւ անպատեական ներողամտութեամբ վարուի թշնամիին հետ:

Տանուտէր Ռուբինեանը միջամտելով ըսաւ.

— Կեցցէ՛ Արաքսին. մեր ժողովուրդը կ'ըսէ. «Ընէ՛ծք անիւ ծողին կը դառնայ». այ՛ր բարեկամներս, փուշ ցանողը վարդ չի քաղեր. սուր գործածողը սուրով կը մեռնի. «Որք սուր անուշուցն, սրով անկանիցին». այս է փրկելն խօսքը: Հայտնուածները որքան որ գլուխ ծռեն, այնքան աւելի մահը երես կ'առնէ: «Համակերպիլ կը բարակցիլ է դժբախտութեան հետ»: Տիւրաբին խօսքն է այս, ամէնէն փափկանկատ կնոջ մը խօսքը:

— Պարոն Կարպետեան — ըսաւ Սիմոնեան — Արաքսի պատճառ կ'ըլլայ մեզ Ընիկն դուրս հանելու: Քիւրախ խօսքը կ'ըլլայ արդ, սակայն իմ կարծիքովս, ազգ մը որ իր զրգոյի ցեղերուն գերեզմանին մէջ կը փնտռէ իր բախտը, այն միշտ դատապարտուած է դժբախտ մնալու: «Ազգ մը որ այլեւս չի յարգեր ազնուութիւնը, արդարութիւնը, ճշմարտութեան սէրը, իրաւունք չունի ապրելու»: Սիմոնեան խօսքն է այս, ոչ մէկ հարստահար զեղ յարգած է գայն:

Բանաստեղծ փեթակեանը իր սեւ պիտերը ոլորելով, անուշիկ ժպիտով մը ըսաւ.

— Ազգ մը որ չի յարգեր ուրիշին կեանքին լոյսը, բուռ մը պէս լոյսը կ'ատէ, խաւարի մէջ կ'ապրի: Ազգ մը, որ լուսաւորութեան մէջ կ'ապրի, արծիւի պէս լոյսի ճամբան կը բռնէ, եւ միշտ դեպի վեր, միշտ արեւին աչքը կը յայտնէ: Աշխարհակալութեան խօսքն է այս, ոչ մէկ հարստահար կեանքի ներդաշնակութիւնը: Կեղոս ըսած է. «Ըսով ոչ ընու՛ դեպումութիւն գետոց ընդունելով, եւ գանկութիւն արծաթափրի ոչ յազի ի բազմութենէ ընչեց»: Պատերազմներու միակ պատճառը, այս անյար աշխարհակալութեան փափաքն է. ծովերը կը խմեն գետերուն յորդ հոսանքները եւ չեն յագեցնար, այսպէս նաեւ մեծ ազգերը կը խմեն փոքր ազգերու արիւնը եւ չեն յագեցնար: Ինչի համար, Բիւրաւոր եւ Արաքսին իրեն ուղղակի երգելը, իրաւունք չունին յափշտակելու ուրիշին կեանքը: զի ամէն կեանք Աստուծոյ պարգեւն է. ո՞վ իրաւունք ունի Աստուծմէ բան մը գողնալու. սպաննողը Աստուծոյ գողն է: Վերցուցէ՛ք սահմանները եւ այն ատեն յառաջդիմութեան աստուածը ամէն երկրի աւագ դունն ենք կը մտնէ:

Սրտածմիկ է այս տեսարանը, սոցա գիտեն թէ երկուք իր լեզու կայ մէջտեղը, բայց ո՞ր իրենցը... — քիչ մըն ալ այսօր առանց հայ. դպրոցի, եւ արդեւ ուշ պիտի ըլլայ: Ի զո՛ւր պիտի գղջան հայ ծնողները, երբ իրեն գաւառները լեզուով եւ բարբաբոլորովն օտարանան:

Հանդէսին երկրորդ մասին մէջ երիտասարդները երգելով «Տար օրիկ» եւ ուրիշ երգեր, եւ կազմեցին հայկական պարտիզիկն Փ. Մովսիսեան շնորհակալութիւն յայտնեց իր. Միութեանն որ իր մասնակցութիւնը բերած էր հանդէսին եւ նուիրած էր կարգ մտար-գրչակալ մը նորակազմութեանը իրտ. միութեան ատենը զպիտ Պ. Պ. Քրունճեան պատահական լեզու շնորհակալութիւն փափաք յայտնեց գործակալութեան, հայ ոգիի պահպանման համար:

Յետոյ բեմ հրաւիրուցաւ բազմապատակ ուսուցիչ Պ. Պ. Հասկմեան, որ երկու ծառով մը շեշտեց հայ մնալու սողը հայ կական դատարարութիւն տալու պէտքը, որովհետեւ թեթեւութեամբ քաղաքական պատճառներով, վաղը անպայման մեղքը պիտի ըլլայ եւ ամբողջը հոն պիտի երթանք: Չանաք հոն պիտի երթանք: Չանաք վերջապէս լեզուով, ըսաւ. «Ընդ միջոցին մանկական գրականութեան վերաբերող հայրենի գիր կ'ուզեն ինձմէ. դժբախտութեամբ բար ես քիչ ունիմ անոնցմէ. բայց այս առթիւ կոչ կ'ընեմ «Կանաչ ծառեր»ի հոգեւորական Պ. Քրունճեանին:

Սահեմ Սիմոնեանը, որ իր մասնակցութիւնը բերած էր հանդէսին, քիչ ունիմ անոնցմէ. բայց այս առթիւ կոչ կ'ընեմ «Կանաչ ծառեր»ի հոգեւորական Պ. Քրունճեանին:



10,178ր այր, 4,380ը կին: Անցեալ շաբաթ այդ թիւը կը հասնէր 9,873ի:

Սէնի նահանգին մէջ նպաստ ստացած են 7,202 բանուոր, որոնց 5,495ը այր, 1787ը կին: Նախընթաց շաբաթուան նպաստը նախկինը թիւն էր 4704:

Գործ ուզած են 33,960 բանուոր, որոնց խնդրանքը կարելի չէ եղած գործադրել: Ասոնցմէ 23,810ը այրերէ և 10,150ը կիներէ կը բաղկանան:

**Չորրորդի տեսակցութիւնները**

Անգլիոյ ելմտական նախարար Պ. Ուինսթըն Չորրորդի որ ներկայիս Միջերկրականի անգլիական նաւատորմի ռազմափորձերուն կը հետեւի, Աթէնք դաջած եւ անգլ. դեսպանատան մէջ տեսակցած է Յունաստանի արտաքին նախարար Միխայիլաքափուլօսի հետ: Խօսակցութիւնը տեւած է մէկ ժամ, խիստ մտերմական մթնոլորտի մէջ:

Անգլիացի նախարարը այսօր ալ Հոմոս պիտի երթայ եւ պիտի տեսակցի Մուսոլինիի եւ Վլօքիի հետ:

**Իսպաիոյ պատերազմի իրադրութիւնները**

Պելիբրատի «Փոլիթիքա» թերթը կը գրէ թէ Իտալիա ներկայիս կարեւոր քանակութեամբ ռազմանիւթ կը կեդրոնացնէ Ալպանիոյ մէջ: Շքորայի եւ հարաւային Ալպանիոյ մէջ զինուորական միջերանցներ հաստատուած են:

Մեծ թիւով իտալացի ճարտարագէտներ հասած են Արպանիա, ընկերակցութեամբ զօրավար Բամիթիօի, ներկայացուցիչ իտալական սպայախոյրի:

Այս առթիւ Պելիբրատի անգլիական դեսպան Սըր Քէնըրտ տեսակցութիւն մը ունեցաւ Եոկոսլաւիոյ արտաքին նախարարին հետ:

«Փոլիթիքա» կ'աւելցնէ թէ վերջին օրերս Շքորայի պատերազմի վրայ թուոցիկներ փակցուած են հետեւեալ վերտառութեամբ. «Անկից՝ Իտալիա», «Անկից՝ Անմէտ Չօկու»:

«Տէլիֆոնի» Վիեննայի թղթակիցը երկար յօդուածի մը մէջ կը բացատրէ թէ ալպանեւիտական զաշնագրին հետեւանքով լուրջ կռիւ մը կը պատրաստուի Իտալիոյ եւ Եոկոսլաւիոյ միջեւ, որուն պիտի մասնակցին նաեւ Ռուսիան եւ Հունգարիան:

**Թուրքիայի յարաբերութիւնները**

Յունաստանի Թուրքիոյ եւ Թուրքիոյ Յոյներուն կառուածներուն մասին վերջնական համաձայնութիւնը կ'սկսուի Ազգ. ժողովին ներկայացուցեալ վաւերացուելու համար: Այս առթիւ «Միլիթէթ» խմբագրականի մը մէջ վեր կը հանէ երկու կտուրներ թեանց հայտարար ոգին եւ կ'ըսէ թէ այս դէպքը կարեւոր եւ նոր թուական մը կը բանայ Թուրքիոյ եւ Յունաստանի պատմութեան մէջ: «Միլիթէթ» գոհունակութիւն կը յայտնէ մասնաւորաբար անոր համար, որ Յունաստանի մէջ թրջատէր քաղաքականութեան շատագոյնները անհատներ չեն, այլ կազմակերպուած կուսակցութեանց պետեր, որոնք այսօր Յունաստանի ճակատագիրը կը վարեն: Յոյն թերթերն ալ նոյն բարեկամական լեզուն կը գործածեն Թուրքիոյ հանդէպ: «Միլիթէթ» կ'երկարակցէ թէ Թուրքիոյ եւ Յոյներու առաջիկային ցոյց պիտի տան թէ իրենց յարաբերութեանց մէջ կը ներշնչուին ո՛չ թէ անցեալի տխուր յուշերով, այլ ապագայի եւ իրենց ազգային շահերու մտահոգութեամբ:

**Կարմիր սեփիսիոյ դիմ**

Ամաթէրտամի մէջ քանի մը օրէ ի վեր կը գումարուի Արհեստակցական միութեանց Միջազգային ընդհանուր ժողովը: Օրակարգի խնդիրներէն մէկն էր Մոսկուայի արհեստակցական միութեանց կարմիր Միջազգայինին հետ յարաբերութեանց խնդիրը, որ գրեթէ ամէն տարի սեղանի կրայ կուգայ: Այս անգամ առաջարկ բերողները անգլիացի պատուիրակներն էին: 6ի դէմ 12 քուէով մերժուեցաւ այս առաջարկը: Ինչպստ քուէարկեցին Անգլիա 2 ձայն, Չեխոսլաւիա 2 ձայն, Ֆրանսա, Պելճիքա, Իտալիա, Հոլանտա, Լեհաստան, Սպանիա, Տանիմարքի եւ երեք պատուիրակներ:

Այս որոշումը ցոյց կուտայ թէ ընկերակցական եւ պոլիտիկ արհեստակցական միութեանց միջեւ համաձայնութիւնը անկարելի է:

**Մալմուսահիւններու դասը**

Չերքակալուած մալմուսահիւններէն 33 հոգի բանտարկուած են: Ասոնք ոստիկաններուն վրայ յարձակելով ծեծած էին զանոնք: Վերաւարուած ոստիկաններէն շատեր տակաւին հիւանդանոցն են: Նաւահանգիստի ընկերութիւնը 1000 ոսկի, նաւընջ, սիկար եւ շաքար զրկած է վերաւորներուն:

**Չարի Զեփիլի միսիս**

Լոս Անճելոսէն կը հեռագրեն թէ Շարլօ անհետացած է: Ինչպէս գրուեցաւ, կինը ամուսնալուծման դատ բացած էր: Այժմ արգելքի տակ անուսած են իր բնակարանը, որ 2 միլիոն տոլարէն աւելի կ'արժէ, եւ 15 միլիոնի հարստութիւնը, որ դրամատան մէջ կը գտնուի: Կինը կը յայտարարէ թէ, համաձայն երկրին օրէնքներուն, իրաւունք ունի այդ հարստութեան 100ին 50ը ստանալու:

Վերջին տեղեկութիւններու համաձայն, Չարլի Զեփիլին առջի գիշեր Շիքաօ հասած է: Ամուսնալուծման դատ տակաւին չէ վերջացած: Ընտանեկան կեանքի, ամուսնութեան եւ զաւակներու մասին իր ունեցած զարգացումները բացարձակապէս կը հակասեն ամերիկեան բարոյականին: Հանրային կարծիքը մեծապէս վրդովուած է: Ամերիկայի եւ Քանադայի կարեւոր քանի մը քաղաքներու քաղաքացիները հրամայած են այսուհետեւ սինէմաներու մէջ չխաղալ այն ֆիլմերը, որոնց մէջ դեր ունի Շարլօ: Ուաշինկթընի եւ Ֆիլադելֆի մէջ արդէն այս որոշումները սկսած են գործադրուի: Չեփիլի կը հերքէ իր կնոջ ամբաստանութիւնները թէ ինք արուեստագիտուհիներու հետ կեանք կ'անցընէ:

**ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ**  
Ցորենի եւ ալիւրի գիները նոր անկում ունեցան, սակայն հասցին քիւս 2 ֆր. 25ի վրայ կը մնայ:  
ՊՈՒՂԱՆԻ ՉՈՒՄԱՆԻ պաշտօնական բացումը կտտարուեցաւ երէկ մեծ հանդիսարարութեամբ:

**ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ**

Կիրակի 23 ցունուար, կէս օրէ վերջ ժամը 3ին Աւթօրվիլի Հայոց բիւս. Միութեան ակումբին մէջ, 138 Rue Etienne Dolet Պիտի Խօսքի ԸՆԿԵՐ Ս. ՎՐԱՅԵԱՆ

Մ. Ա. ԿՈՍՏԱՆԵՆԻՆԻ ՏՐԱՄԱՐԹԻԲ ԻՌՈՒՄԸ  
Այսօր Կիրակի զիշեր ժամը 8ին Ալպեր I. մեծ թատրոնը 64 Rue Rocher, մէջքը St. Lazare և Villiers  
Կը մասնակցին Տիկ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, ԿՈՍՏԱՆԵԱՆ, Պ. Պ. Տ. ՆԵՄԵՆԵԱՆ, Յ. ՂԱԶԱՐԵԱՆ, ՄԱՐՈՒԹԵԱՆ, ՍՍՐԵԱՆ, Վ. ԿՈՍՏԱՆԵԱՆ, ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ, ԳՄԲԵԹԵԱՆ, ԵՆԱ:

Ա. անգամ Փարիզահայ բնի վրայ Ալէք. Պիտի  
ԱՆՅԱՅՏ ԿԻՆԸ 4 արար եւ 1 պատկեր  
ՄՈՒՏԻՔ 30էն 10 ֆր.: Օթեակ 200—150 եւ 100: Տոմսերը բոլոր հայկ. ճաշարաններէն: Ներկայացման օրը կը շէնջ ատուուան 10էն

**ՅՈՒՇԱՏԵՐ**

Հ. Մ. Ը. Մ. Ս. Այֆօրվիլի մասնաճիւղի Ա. Խոստը պիտի մտնի այսօր կիր. 16 ցունուար կէս օրէ վերջ ժամը 2ին, Ս. S. Alfortvilleի Ա. Խոստըին հետ. Stade Dolletի մէջ Այֆօրվիլի:

ԱՂԱՏԱՆՆԵՐԻՆ  
ՊԵՐԱՆՆԵՐԻՆ  
Փարիզի արքայապետ ընկերութիւնը ի նպատակ Փարիզի հայ կաթոնեակներուն կազմակերպած է իր տարեկան պարահանդէսը, որ տեղի կ'ունենայ 30նուար 29 Շարաթ գիշեր ժամը 9ին օթէլ Մաճէսթիքի սրահներուն մէջ, 19 Ave. Kléber: Գեղարուեստական բաժնին մէջ պիտի ներկայացուի Երուսաղէմ Օտեանի «Ազգ. Մասնաճիւղութեան 62րդ յօդուած»:

«Բուժակի» Լոյս տեսաւ 7րդ թիւը (ցունուար) կը ծախուի Պէլլիլի եւ Սէն-Միշէլի լրագրավաճառներուն քով:

ՊՈՒՍԵՎԵՐ ԼԻՒԷ-ԲԵՏՄԷԲ  
Կը ծախուի ընտիր Normand կաթնէ պատրաստուած լիւլէ քաւմաք: Կ'ընդունուին մասնաւոր ապարաններու տուներու համար: Գինը՝ Արպայեան ճաշարան, 3Bis Fbg Montmartre, Téléph. Provence 57—65:

Աժան սեփիսիոյ ֆորթ Թալիի մօտիկը: Լոյս կազ եւ խոխոնոցի իրաւունք: Գինը 17 Rue Damesme, մէջքը իլլաս տի-Թալի:

**ՅԻՆ ՈՒ ՆՈՐ ԳԻՐԲԵՐ**

ՆՈՐ ՄՏՏՅՈՒՄԸ.— Բժիշկին զրքէն փրցուած էջեր 12.50 ֆրանք, Պէպէքս, գաւաշ 10, Հրաշագործ Զաքար թահրապէյ 5 ֆրանք, Բժիշկին Խորհուրդները հայ պատանիներու 5, Վերջալոյսին տակ (Թատր. Կ. Մեհեանի) 5, Անձկութեան ժամեր 2, Բարիզէթ 7.50, Խոսով 3 ֆրանք:  
ԿԸ ՇՄՍՈՒՐԵՆԱՆ.— Օտեանի գործերէն Ընկ. Փանչունի 10, Թաղականի կնիկը 17.50, Միքէի սիրարկածը 5, Միջնորդ Տէր Պապան 17.50, Մասնիչը 7.50, Յեղափ. մակարոնները 7.50, Չաքար Ալիքան 6:  
ՀԱՂՈՒՄԻՏԻՏ ԳՐԲԵՐ.— Անարունանէն Կեանքի դասը 5, Երախաները 5, Խեղճերը 20, Շանթիէն Կինը 6, Ճամբու վրայ 8, Դերասանուհին 8, Վ. Փափազեանէն Ասպետ 5, Գծեր 4, Թուրքիոյ խոզը 4, Լուր-Դաւալը 4, Ներկանդակէն՝ Արախալը 10, Իսկ Քրանտերէնը 5 ֆր., Եօթ Պատմուածքներ 15, Ժող. երկերի (3 հատ.) 65, Բանաստեղծութիւններ Դէմիթեան 10, Նահապետ Բուշակի Դիւանը 25, Մասնաճիւղներ Լժօ 7.50, Նաւարդհաւաքածոյ 25, Ժողովածու թօփշեան 25, ԵՆԱ, ԵՆԱ:  
Մօտ ատենէն ԿՈՅՍԻ ՄԸ ՕՐՈՒՄԻՐԸ:  
Մասնաւոր համար դիմել նամակը Vahram Sévouni 5 Avenue Quihou, Saint-Mandé:  
Փարիզ եւ դատարանը փոսթի ծախք չառնուիր այս գիրքերուն համար:

ՍԱԿԱՐԱՆ  
15 Գունուար 1927  
ԳՐԱՄՆԵՐ ֆր.  
ՍԹԵՐԻՆ, L. St. 122 24  
Տոլար, Dollar 25 05  
Մարք (սուկի) Mark 3 96  
Պրքական Պոթ. L. Trq. 12 75  
Պրք. սուկի or 111 —  
Մէճիսիէ Médjisidjé 8 25  
Լէվա 100 հատը Léva 17 50  
Տրակաթ Drachme 31 75  
Լիր » » Lire 108 75  
Պելճ. ֆրանք » Frc. Belg. 70 50  
Չուիք. » » Frc. Suisse 480 —  
Լէյ 100 հատը Ley 13 55  
Չրվանց (10 Roubles or) 75 —

ԱՐԺԵՌՈՒՂ  
Եգ. Բր. Ֆոնտիէ I Cr. Fonc. Eg. 3050 —  
» II » 1820 —  
» III » 1535 —  
Թուսիլ երկուք. Lots turcs 150 —  
Comptoir Parisien de change et de Crédit  
80, Rue Lafayette  
Le Gérant: H. TEURNIER  
IMPRIMERIE - MASSIS - ÉDITIONS  
208bis, Rue Lafayette Paris(10°)

**ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ**  
ՄԱՆՍԱԳԵՆ ՆԵՐՔԻՆ ՄՈՐՔԱՅԻՆ ԵՒ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՉԻՒՆԳՈՒԹԵԱՆՑ  
126, Rue du Faubourg St. Denis  
Métro: Gare de l'Est  
Ընդունելութեան ժամեր՝ Ամէն օր 2.30.7.30—Կիրակի եւ տօն օրեր՝ 9.12  
Téléphone: Nord 84-04

**ՀՐԱՉ ԶԱՐԴԱՐԵԱՆ**  
ՎԻՐԱԲՈՅԹ - ԱՍՄՆԱԲՈՅԹ  
Chirurgien - DENTISTE  
ՓԱՐԻԶԻ ԲՈՇԿԱԿԱՆ ՓԱՐԵՒԹԻՒՆԵՐԻ  
ՓԱՐԻԶԻ ԱՍՄՆԱԲՈՅԹԱԿԱՆ ԲԱՐՉԵՐԿՈՅՑ ՎԱՐՔԱՐԵՆԻ  
126 RUE BOLIVAR (Մէջքը Պոլիվառ կամ Ժօնէյ)  
Մասնագիտութիւն տատանաշարերու (քառաչու թէ սակի) և սպի  
Բոլոր աշխատանքները ԱՌՄՆՑ ՑՍՈՒԻ, ԳՐԵՐԸ ԶՍՓՈՒԻ  
Ընդունելութիւն ամէն օր ժամը 1.30էն մինչև 8ը: Ու  
ատեն ժամագրութեամբ:

ՓՆՏՈՒՅԷՔ ԲՈՂՈՐ ցրուիչներէն և զրավաճառներէն  
**1927Ի ՖՐԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ**  
Անհրամշտ ամէն Ֆրանսա բնակող Հայու:  
**2000Է ԱՒԵԼԻ ՀԱՍՑԷՆԵՐ**  
ՓԱՐԻԶԻ, ՖՐԱՆՍԱՅԻ, ՊԵՂՃԻՔԱՅԻ, ՋՈՒՆԵՐԻՈՅՑ ԵՒ ԻՍԱԼՈՅՑ ՄԷՅ  
ՀԱՍՏԱՏՈՒՄ ՀԱՅԵՐՈՒ  
ՅՕԴՈՒՄՆԵՐ ՈՒՆԻՉ՝ Ա. Անտոնեան, Լ. Բաշալեան,  
Կ. Բաշալեան, Տիկ. Պ. Բարսեղեան, Տօքթ. Լ. Գրիգորեան,  
Գ. Թէլլալեան, Տօքթ. Վ. Թորոսեան, Ա. Յովհաննէսեան,  
Մ. Նախանեան, Միխայիլ Զեղալ, Ա. Չօպանեան, Մ. Պալ  
ասեան, Հրաւոյ Մամուլէ, Ա. Բաֆֆի.— Ալիգընի ի վի  
Ֆրանսայի եւ Հայոց յարաբերութիւնները, եւ Հայերը Ֆրանս  
այի մէջ: Ինչէր պէտք է գիտնայ Ֆրանսայի Հայ  
Ֆրանսայի բոլոր Հայ Միութիւնները: Անգլիոյ, Պելճիքայի,  
Չուիքերիոյ եւ Իտալիոյ Հայ գաղութները:  
**ԳԻՆ 20 ՖՐԱՆՔ** (ԱՐՏԱՍԱԿԱՆ 25 ՖՐՔ)  
Կեդրոնականը՝  
ՄԱՍՍ 8օրարան, 208 bis, Rue Lafayette, PARIS (10°).  
Կամ ՊԱՆԵՆՑ Գրատուն 233 Faub. St. Martin, PARIS (10°)

**ԽՆԱՆԿԵՂԻՔ ԴՆՐ ԱՆՔԱՆԵՐ ԵՒ ՂԻՍԵՂԻՔ**  
ԱՄԵՐԻԿԱՆ  
**ԱՍՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՔԼԻՆԻԲԷ**  
12, RUE RICHOMME, 12  
Գարմանուք եւ ատամաշինութիւնը տեղի կ'ունենայ կար  
մասնագէտներու կողմէ, խիստ դիւրամատչելի պայմաններ  
Առաջին այցելութիւնը ձրի  
Հաղորդակցութեան միջոց՝ Métro: Barbès-Rochecouart

**CABINET MÉDICO-CHIRURGICAL ET DENTAIRE**  
**ՏՕՔԹ. ՍԵՐԵԱՆ** Հիմնուած 1900ին  
TÉL. MARCADET 03-64  
38 Avenue St. Ouen - 20 Rue Fauvet - Paris (18e)  
Ընդհանուր հիւանդութիւններ, սեռամիզային, մորթի, ֆրակ  
կախի, շնչերկային, թոքի հիւանդութիւններ, ծննդաբեր  
ութիւն եւ կանանց հիւանդութիւններ, վիրաբուժական գործ  
ղութիւն եւ գործի արկածներ, ելկտրական դարմանում  
Ք. Յատապայթ:  
ԱՍՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ  
Ակառի դարմանում, ատանց ցուրի ահապ բաշկ 10 ֆր  
արուեստական ճերմակ ահապ 20 ֆրանքի, սակի զուրան  
Ֆրանսէն սկսեալ:  
Բաց է ամէն օր 9—12 եւ 2—8. Կիրակի եւ տօն օրեր մի  
չև ցերեկ:

**ՃԱՇԱՐԱՆ “ՖԼՕՐԻՍ”**  
61, Rue Monsieur le Prince, Paris (6e)  
ՄԵՐՈ ՕՏԷՕՆ ԿԵՄ ՄԵՆ ՄԻՇԷԼ  
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ԵՐՈՒՊՈՒԿԱՆ ԻՆՍՏՐՈՒՄ ԿԵՐԱԿՈՐԵՆԵՐ  
Անթերի սպասարկութիւն

**PRIMEROSE**  
183, Rue St. Honoré, 183 PARIS (1)  
Téléph. Richelieu 91-64 Métro:Pyramides - Palais-Royal  
**GALERIES MAUBEUGE**  
39, Rue de Maubeuge, 39 PARIS (9)  
Téléph. Trudaine 75-55 Métro: Cadet  
Սոյն երկու վաճառատանց մէջ կը ծախուին կանանց յատու  
ամէն տեսակ մետաքսեղէն եւ բոլորեղէն կերպասներ շատ  
նպաստաւոր գիներով: ձոյս մեքերը քրէկի տը շինի:

**ԹԷՅ ԵՍՎԱՐՈՒ**  
ՈՒՂԱԿԻ ՍԷՅԼԱՆԷ, ՀՆԻՎԱՍՏԱՆԷ ԵՒ ՉԻՆԷ ՆԵՐԱՅՈՒՄ  
ԱԺԱՆ, ՀՈՏԱԷՏ ԵՒ ԽԱՅՈՂԱԿԱՆ  
ՊԱՆՈՒՅԵԼ, ԳՐԱՆՍԱՅԻ  
ՄԷՅ  
ԳՐԱՐԱՆ  
ՆԵՐԷՆ  
Հատաստեալ 1880ին  
Արեւելեան ճաշակ եւ ճարտի թէրթով խառնուրդներ  
Թղթակցութիւն ուղղել Comptoir des «Thés YAYVOU  
23, Rue Sénac, Marseille.  
Եկպատի ընդ. ներկայացուցիչ C. B. Hlavay, 7 Rue M  
moud Pacha et Falaki, Alexandria.



ՔՐԱՆՍԱՆ 35 ֆ. 70 ֆ. 140 ֆ. ԱՆՎԵՐՍ 20 շ. 40 շ. 200 շ. 400 շ. 6 ամ. 10 ամ. 200 ֆ. 400 ֆ. 200 ֆ.

"HARATCH" խմբագիր՝ ՇԱՎԱՐՇ ՄԻՍՍԱԿԻԱՆ Director-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN Rédaction & Administration : 208 bis, Rue Lafayette - PARIS (10e) TÉLÉPHONE : NORD 57-82 MÉTRO : LOUIS-BLANC ou JAURES

ԵՐԵՎԱՆԻ 18 ՅՈՒՆԻՍԻՐ 1927 18 JANVIER 1927

ԵՐԿՈՒ ԽՕՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ՈՒՉԵՆ

Պոլսոյ թերթերը կը գրեն թէ կառավարութիւնը համաձայնեալ է շահակից պետութեանց հետ, «բազմաթիւ արեւակիցներ» փոխադրելու համար թուրքիա, Աճարիայէն եւ Մակեդոնիայէն: Նոր չէ այս ծրագիրը: Թուրքիա չարաչար կը տանջուի բնակչութեան պակասէն: Թուրք թերթերու մէջ հրատարակուած վիճակագրութեանց համաձայն, այդ արեւնազանդ երկիրը ունի 727,520 քառ. քիլոմետր տարածութիւն եւ 12,815,274 բնակիչ: Այս հաշուով, իւրաքանչիւր քառակուսի քիլոմետրին կ'իյնայ 17 մարդ: Իսկ մենք գիտենք որ ոչ միայն թուրքիոյ իրական տարածութիւնը 700,000 քիլոմետրէն աւելի է, այլ եւ բնակչութիւնը շատ աւելի պակաս քան 12 միլիոնը: Ամէնէն բարեացակամ հաշիւներն ալ 7-8 միլիոնէն աւելի չեն ցուցներ, իսկ բուն թուրքերու թիւը՝ 4-5 միլիոն:

Այնպէս որ, Էնկիւրի շարունակ ծրագիրներ կ'որոճայ, երկիրը լեցնելու, թուրքերու թիւը մինչեւ 30-40 միլիոնի հասցնելու համար: Այդ նպատակին կը ձգտի մնացած ոչ-թուրքերը ձուլելու քաղաքականութիւնը, որ մասնաւոր գոյն ստացած է քեմալական յաղթանակէն ի վեր, եւ կը հետապնդուի առեւտրական գրասենեակներէն մինչեւ դպրոցները: Մնաստուի խորքը մնացած հայկական բեկորներու եկեղեցիներն ու դպրոցներն անգամ գրաւած են, հատուկաբար կ'առանձնեցուցանեն, եւ եթէ պատարար օղջ մնացած տէրտէր մը մեծնի, այլ եւս թոյլ չեն տար որ նոր մը զրկուի: Պոլսոյ քիմիկ տակ, Էտիքի-Ռոտոսթոմ-Մալաքա մնացած ափ մը Հայեր տարիներէ ի վեր «հոգեւոր միախառնութիւն» կը խնդրեն Պատրիարքարանէն, բայց Էնկիւրի հրաման չի տար ոչ իսկ երկու օրուան համար:

Նոյն հետեւողական գիծը նաեւ իսլամ, բայց ոչ-թուրք ցեղերու հանդէպ: Այնեւ նշանաբանը դարձեր է հրապարակաւ ժխտել թուրք, լազ կամ չէրքէզ ազգութեանց գոյութիւնը: Թուրք պատմագիտութիւնը այնքան ճիշտ է որ, երբ օրակարգի վրայ էր հայկական դատը, գրել կուտար թէ Հայաստան չիտուած երկիր կամ ժողովուրդ չկայ, այլ եղածը Բիւրսիստան է, սիկորէն ի վեր: Իսկ երբ քրտական ապստամբութիւնը ծագեցաւ եւ քրտական անկախութեան ծրագիրները յայտնուեցան, թուրք հրապարակագիրները նոյնքան հմտութեամբ ապացուցին թէ ինչ որ Բիւրսիստան կը կոչեն, պատմական միայլ է, այդպիսի երկիր կամ ժողովուրդ չկայ, այլ եղած է միայն Հայաստան...

Բայց այս չէր մեր բնիկը: Ուրեմն, Էնկիւրի ձեռնարկած է երկիրը լեցնելու եւ շէնցնելու: Եւ որովհետեւ ոչ օտարները ձուլելով, ոչ ալ ծնունդներով կրնայ լրացնել պակասը, կը դիմէ ուրիշ գործնական միջոցի մը, — թուրքիա ներածել հարեւան երկիրներու մէջ հաստատուած թուրք բազմութիւնները:

Այդ երկիրներն են, արեւմտեան կողմէն, Ռուսաստան, Պուլկարիա եւ Եւրոպա: Երբ երկիրներուն մէջ ալ, թուրքերը տուն - տեղ եղած են եւ չեն ուզեր տեմնել իրենց «վաստ»ը: Բայց մասնաւորապէս Սեբասթիա վերջերս այնպիսի քաղաքականութիւն մը բնած է որ, թուրքերը կը մղուին գաղթելու: Այս պէտք է ըլլայ Մակեդոնիոյ մասին գոյացած համաձայնութիւնը:

Ինչ կը վերաբերի արեւելեան սահմաններուն, բոլոր տեսակի թուրքերը ամէն աշակցութիւն կը վայելն խորհրդային իշխանութեան գրոշին տակ, շնորհիւ խորախորհուրդ քաղաքականութեան մը, որուն յառաջապահներն են նաեւ մեր կարմիր փառասերը: Ամէն ուր որ ափ մը թրքութիւն կայ, վերածուած է վիճակագրութեան, Աճարիայէն մինչեւ Նախիջևան: Անոնք թուրքիա դառնալու մասնաւոր փափաք մը չունին, Հայաստանը աւելի մօտ է, եւ լայնօրէն բաց իրենց առջեւ:

Եւ սակայն, համաձայնութիւն գոյացած է եղեր Աճարացիներու մասին, անշուշտ վրացի կոմունիստներու ճնշումով: Արդ, ազգերու եղբայրացուցութեան դէմ դաւաճանութիւն կատարուած կ'ըլլար, եթէ հայ կոմունիստներն ալ փափկութեամբ հասկնային «ձեռնարկ իշխանութեան», թէ Հայաստանը տեղ չունի իր իսկ գաւառներու համար, հետեւաբար, լաւ կ'ըլլար որ փոխանակութիւն մը կատարուէր...

Մինչեւ այսօր ալ, թուրք-թաթար գաղթականներ կը շարունակեն տուն - տեղ ըլլալ Հայաստանի մէջ, իսկ Հայերը դէպի Ռուսաստան կը գաղթեն իրենց իսկ երկրէն, եւ յափշտակուած հողերէն: Նախիջևանէն կամ Ղարաբաղէն: Ընկերային արդարութեան, նոյն իսկ «արդարադատական դիկտատուրա»ի օր գլուխ մէջ գրուած է որ ամբողջ ժողովուրդ մը իր հայրենիքէն, իսկ ուրիշ գրկուի, ինքն իր վրայ կ'զուգործուի՝ ճանիճները չորցնելով ապրելու հարկադրուի, եւ անհամար բազմութիւններ ցրուէ աշխարհի չորս հովիտներ, իսկ ուրիշներ լողան անասան տարածութիւններու վրայ, իւրացնեն հայկական հողերը, եւ իրենց արեւակիցներն ալ, իրաւագործի, ճղատար Հայաստանի գլխուն փաթկեն:

Ժողովուրդին մէջ մարտ կը տքայ, կը տապալուի իր հայրենիքին մէջ, հողի եւ ջուրի պակասէն: Միւս մասը, աւելի դժբախտ, կը ծիւրի ու կ'ալլաւորի եօթը ծովերու վրայ: Ո՞ր օրուան կը սպասեն, իրենց այնքան փառաբանած եղբայրացուցութեան քարիքներէն ճաշակ մը տալու համար:

ԻՐ ԱՆԿԻՆԵՍ

«ՏԱՐԻՆԵՍԻ ԿՐՏԱՎԱՆՆԵՐԸ»

Իրիկուն մը, երեք հոգեով, նասեր էինք հանրային պարտեզը: Ընկեր մը, — հաստատուր եւ սրտատուչ, կը խօսէր անցեալէն, կարենէն: Ռոտոսթոմն ու թօփչեանէն... Բերտ ու վայրի, բայց զգայուն ու խոր հայրենաբաղձութիւն մը կար աչքերուն մէջ: Կոնստանդնուլի, ինչպէս հեռուոր ու կարօտակէզ ձայնի մը.

— Սրտածո՞ր, ըստ՝ տեղանք մը խեղդելով ձայնին մէջ, Սրտածո՞ր ըլլալի՞ք օր մը...

Ու, յանկարծ, Կրօշակի մէջ թիւր հանեց զբազանէն: Եւ, տարով մեզ բնկերացող պարտնիք՝

— Կարգա՞, շարունակեց, կարգա՞: Քեզ կը հպարտացնէ ստիկա: Կը մտուցանէ: Կիբը չկայ, այլ՝ մտածում, փաստ ու սեւասկէտ:

Մեզ ընկերացողը, բարեմիտ վերապահութեամբ, մը վարանեցաւ աննիլ զայն: Ընկերս ուզեց պատճառը իմանալ: Զայնը կերկրուն, ու գրեթէ անհաստատ՝

— Տարօրինակ մտափախութիւն մը ունիմ այս թերթէն, բացատրեց: Ամենախիբի բարաններէն մէկը, որ անձնուրաց Դաշնակցական մըն էր, համիտեան շըջանին զբաղմը Կրօշակ մը դրեք էք օր մը: Զերբակալուեցաւ, ու կանխելու: Ան օրէն ստիկն ուխտեր եւ ձեռք չտանիլ զայն...

Յնցուեցա՞ր: Կրօշակուեցա՞ր, նոյն իսկ: Անձի մը այս կամ այն վերաբերումը արժէք չունէր, անշուշտ: Բայց խոր ու կսկիւնցող ցուրտ մը անցեալ մէջ: Ու, գրեթէ դառնացած.

— Մէկ հոգի դոնուր է, միջամտեց, Կրօշակ մը ունենալուն համար: Իսկ հայ ժողովուրդը իր կէտը գոհեց, որովհետեւ զուրկ մնաց զրօշակէ մը... Որովհետեւ մնաց թող ու մեկուսի: Զգիտացաւ բարձունքներուն ու խրամներուն վրայ զայն բարձրացնողներուն թիկունքը ըլլալ միակամ ձեռացաւ ու վախցաւ: Որովհետեւ, մեր ժողովուրդի նկատելի մէջ մարք՝ սարսափեցաւ արեւելէ՞ն՝ «տարօրինակ մտափախութեամբ» մը, եւ նախընտրեց արեւելին մէջ խեղդուիլ, փոխանակ արեւել խեղդուիլ...: Ան ալ թղթէ «Կրօշակ»ներէն իսկ մեկուսացումն է որ՝ 80ական թուականներէն մինչեւ 1908 յազգեցող համիտեան արեւմուտքը: 1908-1918՝ սքրապարտ թաւակոյն ու կոպէտը սնուց: 1920ին՝ «եղբայր» թէ՛ւալը ծափով ու ծննդալով զիմաստրել տուաւ, իսկ 1920էն ստիկն — եօ՞թը տարի է — «տրձնաշուրթ» փառաբանութիւն» կը պարտադրէ՞ Պալքանիւրէն Գարեգի ու Ամերիկա, բո՞ւր հասակի ու գոյնի ինքնուրացներուն...: Այս է ձեռ ուխտը...

Ու միտար կուգայ մեծ ուխտաւորը՝ Բրիտանիոյ Միքայէլեանը, իր այնքան խոր պատգամով.

«... Ինչ խօսքեր չեն հարկաւոր, «այլ՝ գործ».

«Ու մեզ վարանուներն չեն հարկաւոր, «այլ՝ հաւատ»:

«Այլ՝ ՊԱՆՈՒՅ»

ՀՐԵՆՆԻ ԷՄԻՆՆԵՆՆԻ ՎԱՆՔԻՆ ՄԷՁ

Դեկտ. 25ի երեկոյան հրդեհ կը ծագէ Էմիմանի վանքի բակի գոտուղ շէնքի մը ծխակողմէն: Անախտապէս երեւանէն կը հասնին հրշէջ զուտորը, որոնք կը մարեն կրակը: Այրած են եւ թեր սենեակի առաստաղները:

ՕՐԸ ՕՐԻՆ

Պարսպ հողերը լեցնելու համար

Պոլսոյ «Ճիւմնուրիլէթ» քեմալական թերթը կը գրէ թէ կառավարութիւնը համաձայնած ըլլալով շահակից պետութեանց հետ, «բազմաթիւ արեւակիցներ» թուրքիա պիտի բերուին Աճարիստանէն եւ Մակեդոնիայէն:

Գործազրկութեան սագնասը

Գործազրկութեան տագնապի սաստկանալուն պատճառաւ անգործ բանւորները հեռոճեակ կը կազմակերպուին: Առջի օր 20րդ թաղամասէն 400 գործազուրկներ միթիւնիէ մը վեր թափորով թաղապետարան գացին, բողբոջու համար նպաստաբաշխ պաշտօնեային դէմ, որ կը մերժէր կարգ մը գործազուրկներ արձանագրել իրեն նպաստակալ:

Ռուսանի մէջ ալ մօտ հազար գործազուրկներ քաղաքապետարան գացին, պահանջելու համար որ նպաստի մատուց մը հաստատուի անգործ բանւորներուն համար: Փարիզի մէջ կարգ մը գործազուրկ Հայեր նպաստ ստանալու համար դիմած էին պատկանեալ թաղապետութեան: Դիմումները նկատի առնուած են եւ շուտով անոնք ալ Ֆրանսացիներուն պէս օգնութիւն պիտի ստանան: Նպաստի իրաւունք ձեռք բերելու համար անհրաժեշտ է 1.— Ունենալ գործազուրկութեան վկայագիր մը (carte de chomage), առնուած իր վերջին գործատէրէն, 2.— Այդ վկայագիրը շաբաթը երկու անգամ վիզա ընել տալ տեղաւորման գրասենեակէն (Bureau de placement):

Սէնթ Էթիէնի մօտ Բուզօնի ապակեղէնի գործարանը առաջարկած էր 100ին 10 զեղչել բանւորներուն օրավարձը: Բանւորները մերժած ըլլալով, գործարանը փակուեցաւ եւ 250 հողի անգործ մնացին:

Թուրքի մէջ մետաղագործարան մը ազատ արձակեց իր բանւորներէն 87ը, որոնց 60ը օտարական:

Նոր լուրերու համաձայն, տագնապը սուր հանգամանք առած է Կոշիկի, ժորթի եւ Կաշիի ճիւղերուն մէջ: Փարիզէն մինչեւ գաւառները: Ֆուլօնի (Իլէ Վիլէն) մէջ, կոշիկի 7000 բանւոր-բանւորուհիներէն 600ը բոլորովին անգործ են, 400ը շաբաթը 32—40 ժամ կ'աշխատին, մնացեալները՝ 9—30 ժամ: Ռոմանի մէջ (Տրոմ) 4000 բանւորներէն 1200ը անգործ են, 2000ը միայն 24 ժամ կ'աշխատին, 600՝ 30—40 ժամ: Լիոնի մէջ 2000 բանւորներէն 1400ը անգործ են, 600ը գրեթէ կէս աշխատանք ունին: Մորթի 1500 բանւորները ամբողջութեամբ շաբաթը քանի մը ժամ կ'աշխատին: Արիփօսի մէջ (Սէն Ե Ուազ) 1էվի տունը, որ 500 բանւոր ունէր, հիմա հազիւ 300 հողի կը պահէ, որոնք երկու շաբաթը 72 ժամ կ'աշխատին: Թուրուզի մէջ 2500 բանւորներէ հարիւրին տասը բոլորովին անգործ են, հարիւրին 70ը մասնակի, նոյնը կ'աշխատեն միւս ճիւղին մէջ: Ամիէնի մէջ կարգ մը մանր գործարաններ փակուած են, իսկ ուրիշներ կը գործեն աշխատանքի օրերը կրճատելով: Լիմոնի մէջ, որ կոշիկի հանրածանօթ կեդրոն մըն է, երկու-երեք մեծ տուններէ գատ, միւսները փակուած են: Մարսէլի մէջ, ուր 500 բանւոր կը համրէ այս ճիւղը, գործատէրերը հարիւրին 35 անգործութեան դատապարտած են բանւորները, իսկ միւսներուն կը պարտադրեն 100ին 10—20 զեղչ՝ օրակաւնի վրայ:

Ընդհանուր առումով, կոշիկարութեան ճիւղի բանւորներէն հարիւրին 35ը անգործ են, 100ին 7—10 լման շաբաթ կ'աշխատին, մնացեալները՝ կրճատեալ: Պաշտօնական թիւերու համաձայն, Ֆրանսա 350,000 բանւոր եւ բանւորուհիներ ունի մորթի եւ կաշիի ճիւղերուն մէջ, ուրեմն 120,000 անգործ կալ միայն այս ճարտարագործութեան մէջ:

Անգործութեան տագնապը մեղմացնելու համար, Մարսէլի կաշիի եւ Մորթի սէնտիքան որոշեց աման կոշիկներ շինելու եւ նորոգելու գործ մը հաստատել: Այս առթիւ կոշ մը ուղղուած է հանրութեան:

Փէրիկօրի եւ Լիմոնիի երկրագործական սէնտիկաններու միութիւնը կիրակի օր ժողով գումարելով քուէարկեց բանածե մը, որով կառավարութեան կ'առաջարկուի փոխանակ գործազուրկներուն նպաստ տալու, զանոնք աշխատցնել հողագործութեան մէջ, նոյնիսկ առաջին տարիներուն համար նուէրներ խոստանալով անոնց: Այս կերպով թէ՛ անգործները գործ պիտի գտնեն եւ թէ՛ Ֆրանսայի հողագործութիւնը՝ որ մեծնելու վրայ է, պիտի վերակենդանանայ:

Գերմանիոյ ապագիւնումը

Գերմանիոյ եւ Դաշնակից պետութեանց միջեւ ապագիւնման բանակցութիւնները կը կատարուին երկու ուղղութեամբ եւ երկու տարրեր քաղաքներու մէջ. — 1. Ռազմախիթի առեւտուրին մասին վիճարանութիւնները կը կատարուին Պերլինի մէջ, 2.— Արեւելեան Փրուսիոյ ամբողջութեան մասին բանակցութիւնները տեղի կ'ունենան Փարիզի մէջ: Փարիզի բանակցութիւնները կը վարեն Գերմանիոյ կողմէն զօրավար Ֆօն Փաւլէյս եւ Պ. Ֆէօրսթըր, որոնք Պերլինէն գալով տեսակցեցան զեւսախորհուրդի նախագահ Պ. Ժիւլ (Լուրերու շարունակութիւնը կարգալ Գ. էջ)

ԵՐԿՈՒ ԵՊԻՍԿՈՍՆԵՐՈՒՆ ԿՈՒՐԻՔ

Պալաքեան - փայտեան հաւամարտութիւնը սուր հանգամանք ստացած է, բարձր քիչ-քիչ քանակի փոխադրութեան որոշումներ ի վեր: Կիբակի օրուան համար լուրջ միջադէպ մը կը սպասուէր: Հոգաբարձութեան հրաւերով ոստիկաններ կը հսկէին եկեղեցիին առջեւ: Պալաքեան եպս.ի բացակայութեան շնորհիւ, հանդարտութիւնը պահպանուեցաւ եւ ո՛չ մէկ միջադէպ տեղի ունեցաւ: Բարձր քիչ-քիչ փոխադրութեան որոշումը ընդունած ըլլալով, միշտ կը մասնակցի արարողութեանց:

ԹՈՒՐԿԻՈՅ

ՆԱՐԻՆՉՆԵՐՆ ՈՒ ԼԵՄՈՆՆԵՐԸ

Նարնիլի եւ Լեմոնի թուրք վաճառականները, նկատելով որ Իտալիայի Պոլիս փոխադրուած նարնիլն ու Լեմոնի աւելի աստիճանաբար կ'ըլլայ քան Մերսինէն Պոլիս փոխադրուած բերքը, դիմած են Առեւտրական Սենտիկան, խնդրելով պաշտպանողական միջոցներ, այն է մաքսային սեղմումներու ենթարկել իտալական ապրանքները, թրքական շոգեւաններուն պարտադրել զոչեքի համար եւն:

ԲԱՍՏԱՎԱԿԱՆ ԹԻՒՆԵՐ

Հետեւելով թուրքիոյ իրենց կրօնակիցներու օրինակին, Եգիպտոսի իսլամներն ալ ծրագրած են փոխել Շէրիի ամուսնական օրէնքը: Կազմուած է յանձնախումբ մը, որ ամուսնութեան եւ ամուսնալուծման համար աւելի խիստ օրէնքներ պիտի դնէ, արգելելով բազմակնութիւնը: Մէկէ աւելի կին աննիլու արտօնութիւն պիտի կրնայ տալ դատաւորը, երբ բանաւոր պատճառներ կան:

ԹՈՒՐԿԵՐԸ ԵՒ ՌՈՒՍԵՐԸ

Կարսի մէջ թուրք եւ ռուս պատուիրակները կնքած են համաձայնութիւն մը, որով երկու երկիրներուն սահմաններէն փոխադարձաբար պիտի կրնան օգտուիլ Ռուսերն ու թուրքերը:

ԹՈՒՐԿԵՐԸ ՎԱՐՏԱՎԱԿԱՆԵՐԸ

Թուրքիոյ նախարարութեան ընդհ. սնօրէն Իսմայիլ Հազըր պէս յայտարարած է թէ ամբողջ երկրին մէջ 320,000 հողի իւրեան նախնական կրթութիւնը կը ստանան վարձարաններու մէջ, ուր կը պաշտօնավարեն 10,000է աւելի ուսուցիչներ, 1500ը ուսուցչուհի:

ԳԻՒԼԱՅԻՆԵՐՆ ԱՆ ԴԵՄ

ձեւմակ Ռուսիոյ տեղական սովեթներու նոր ընտրութիւնները վերջացան: Վերստուղիչ Կեդր. Մարմինը այս առթիւ կը հրատարակէ երկար տեղակալի մը, որուն մէջ կը գանգատի ծագումով լե՛ն կաթողիկ քահանաներու գործած ազդեցութեան մասին: Նոյն պահուրդը «Եւրպակ»-ներու (հարուստ դիւղայի) գործունէութեան մասին: Ասոնք տեղ տեղ կը կազմեն ճշմարիտ «ճեմակ սէնտիկաներ»: Ընտրութիւններէն շատերը բեկանուած են եւ Միւսկի կառավարութիւնը շըջաբեկանով մը կը յանձնարարէ որ այսուհետեւ բարեկեցիկ դիւղայներուն արգիլուի քուէարկել:

Ընտրութիւնները կազմակերպուելու եւ վարելու պաշտօն ունեցող 220 կոմունիստ գործադիրներէն 32ը կուսակցութեան կառուած են՝ իսկ 69ը՝ կախակալուած մէկ տարուան համար:





Բանագործի, սպայակոյտի նախագահ զօր Պարաթիէի եւ Միջ- դաշնակցային զինուոր. կոմիտէի անդամներուն հետ:

Գերման պատուիրակները որոշ առաջարկներ ներկայա- ցուցին, որով կը պահանջեն պահպանել բոլոր ամբողջութիւնները եւ քանի որ միայն երկրորդական կարեւորութիւն ունեցող ամ- բողջութիւնները: Միջդաշնակցային կոմիտէն ալ կը պահանջէ քանի որ բոլոր ամբողջութիւնները, բացի Բէժովիցայէրիէն է, Բիւսթրիւնի եւ կիօհաուէ, համաձայն վէրսայի դաշնագրին: Որոշումը այսօր պիտի տրուի:

Անկարելի է գերման սպառա- զիութեանց եւ Օտտերի ու ամբողջ Արեւելեան Գերմանիոյ մէջ սխառտմանի կերպով կառուցուած ամբողջութիւններու ինչպէս չկապել ոչ միայն Անատոլիոյ, այլ Ֆրանսայի ապահովութեան խնդրին հետ:

Գերմանիոյ խաղաղասիրական նպատակները գոյութիւն ունին միայն գերման խաղաղասիրներու խօսքին մէջ, որ կ'ը- բեւի սահմանուած է միայն արտասահմանի համար: Ապացոյցն այն է որ խաղաղասիրական կազմակերպութեանց անդամները խիստ փոքր թիւ կը կազմեն բաղադատման բաղադրութիւն եւ զօ- բաւոր զինուորական կազմակերպութեանց:

**Ֆրանսա ոսկի կը դրկէ Ամերիկա**

Նիւ Եորքէն հեռագիր մը կ'ըսէ թէ յիշեալ քաղաքը հասած է չորս միլիոն տոլարի (100 միլիոն ֆրանք) ֆրանսական ոսկի եւ յանձնուած է Էմիլիոյն Էքսէլէնս Ըրօվինկ Թրաւթ Բըմ- փընի» զբաղմունքը: Որովհետեւ Ֆրանսայէն դուրս ոսկի դրկելը արգելուած է, այս ոսկի դրամը դրկողն է Ֆրանս. կա- ռավարութիւնը կամ Պանք տը Ֆրանսը: Կը կարծուի թէ ասոնք մաս կը կազմեն վերջերս Պանք տը Ֆրանսի կողմէ գնուած ոսկիներուն, որոնց ընդհանուր արժէքը մէկ միլիոն ֆրանքը կ'անցնի: Այս ոսկիին փոխարէն տոլար եւ սերբիւն պիտի գնուի:

**Զրոյի սեռակցութիւնները**

Քաղաքական շրջանակներու մէջ խիստ մեծ կարեւորու- թիւն կը տրուի Անգլիոյ ելմտական նախարար Պ. Չըբլիլի տե- սակցութեանց Յունաստանի եւ Իտալիոյ պետական մարզոց հետ: Թէեւ հեղինակաւոր շրջանակներու մէջ կը հաւատուի թէ այս տեսակցութիւնները պաշտօնական հանգամանք չունին, սակայն ստոյգ է որ անոնք կը ձգտին աւելի մտերմական դարձնել միջերկրականեան այդ երկու պետութեանց յարաբե- ռութիւնները Անգլիոյ հետ:

Պ. Չըբլիլ երէկ ալ ներկայացաւ Իտալիոյ թագաւորին: Հոռմի մէջ հանցիկորոյններ տրուեցան ի պատիւ նախարարին, որ անգլ. նաւատորմին ռազմափորձերէն վերջ Լոնտոն պիտի դառնայ:

**Փախա էֆրիմի խաւուրթին հասոյքները**

«Թուրք օրթօտօքս եկեղեցիներու պետ» Փախա էֆրիմ դատ բացած էր Յոյն Պատրիարքին եւ Մինօղի անդամներուն դէմ, որոնք զինք բանադրած էին: Իր պահանջմագրով, իբրեւ օրթօտօքս եկեղեցիին սուրբ ներկայացուցիչը, 110,000 ոսկի կը պահանջէ: Դատը կը շարունակուի:

**Բիւրսիստի էմիրը ? ձերբակալուած**

Ատենէ մը ի վեր Նիսի բարձր շրջանակներուն մէջ աչքի կը զարնէր արեւելեան տարագրով երիտասարդ սպայ մը, որ խաքի հագուստ կը հագնէր եւ ֆէս կը դնէր, կուրծքը զար- դարուած էր բազմաթիւ ժապաւէններով, որոնց մէջ նաեւ Պատուոյ Լեգէոնի ժապաւէնը եւ հինգ զանազան շքանշաններ. օձիքին վրայ ալ ոսկի նշան մը ունէր: Շարունակ ձիով պտոյտ- ներ կը կատարէր եւ բարձր տեղեր կը յաճախէր, երբեմն ալ ձիարշաւներու կը հետեւէր իր ձիով:

Այս մարդը ինքզինքը կը կոչէր Նորին Բարձրապատուութիւն իշխան Չերէշէնտօ, զօրավար եւ էմիր Գիւրտիստանի, զիւանա- գէտ, ծնած 1899 Փետր. 22ին Վիլնայէրի մէջ (Բիւրսիստան): Ունէր ուրիշ անուններ եւ տիտղոսներ ալ. էլ Հատիպին Հասան պին Բօմտան Մուհամմէտ Չարիշատ էր Բաշիտ, իշխան Մու- համմէտ Սայիտ Չերէշէնտօ (կամ Չարիշատ), իշխան Փաքէ- լէքս, եւն.:

Նիսի օտարականներու հակիչ ձիւղը կասկածելով այս մար- դու ընթացքէն, քննութիւն մը բացաւ եւ հաստատեց թէ այս «իշխան»ը կ'ապրէր պարզապէս իր խաքած կիներէն շրջման դրամներով: Ատեն ատեն Նիւ Եորքէն հեռագրով 50 տոլար կը ստանար, սակայն այս գումարը բաւական չէր իշխանական կեանք մը վարելու համար: Ոստիկանութիւնը խուզարկութիւն մը կատարեց յիշեալին բնակարանը եւ զտաւ քառուշուէ կնիք մը, որով կեղծ դիւանագիրտական անցագրեր պատրաստած էր իրեն համար: Գտնուեցան նաեւ կարգ մը ուրիշ թուղթեր, որոնք կը հաստատեն թէ «իշխան»ը 1924ին Անգլիայէն, ու Գերմա- նիայէն 1925ին Ամերիկայէն եւ վերջերս ալ Չուեցերիայէն արտաքսուած է:

Կեղծ «իշխան»ը բանտարկուեցաւ:

**Անաստուի ևոր Երկարույնները**

«Աղշամ» կը գրէ թէ խուռած են բանակցութիւնները, որոնք տեղի կ'ունենային Անատուի մէջ երկաթուղիի նոր գիծերու շինութեան մասին, թուրք կառավարութեան եւ շուէտական ընկերութեան մը միջեւ: Խուռած պատճառն է այն որ, Շուէտա- ցիները 20 միլիոն տոլար աւելի կը պահանջեն այն գումարէն, զոր կառավարութիւնը կ'առաջարկէ: Միւս կողմէ, կարգ մը օտար ընկերութիւններ, հակառակ քարոզութիւններ կ'ընեն Շուէտացիներուն մօտ:

Հակառակ այս հերքումին, նոյն թերթը կը հաղորդէ լուր մը, որուն համաձայն շուէտական ընկերութիւնը յանձն առած է 1080 քիլոմէր երկաթուղի շինել Անատուի մէջ, նոյնիսկ ստորագրուած է պայմանագիրն ալ Էնկիւրի մէջ: Սակայն ըն- կերութեան կեղծանական վարչութիւնը չէ ուզած վաւերացնել զայն, առարկելով թէ գիծին անցնելը կարգ մը տեղերուն մէջ բնական մեծ արգելքներ կան: Այս պատճառաւ բանագնաց չէնտարքը Մթօքօյմ գացած է, անհրաժեշտ բացատրութիւն- ները տալու համար կեղծումի:

Անատուի գործակալութիւնը կը հերքէ բանակցութեանց խզման լուրը: Միւս կողմէ Մթօքօյմէն առնուած հեռագիր մը կ'ըսէ թէ շուէտական չօրմ ընկերութիւնը եւ զանիական սնե-

Ամբողջ գաւառին մէջ, այր՝ 51,003, կին՝ 49,322. Գումար՝ 100,325 հոգի:

Մնացած գաւառներու մասին, նախապէս տեղեկութիւն տրուած է արդէն: Այսպէս, Չանգիբասարի ամբողջ գաւառին մէջ այր բնակչութեան թիւն է՝ 31,993, կին՝ 32,683. Գումար՝ 64,676: Լոտի-Փամբակի մէջ, այր՝ 57,483, կին՝ 56,924. Գումար՝ 114,397: Մեղրիի մէջ այր՝ 3,723, կին՝ 3,221. Գումար՝ 6,944 հոգի:

Այսպէս Հայաստանի բոլոր ինը գաւառներու զիւղական վայրերու բնակչութեան թիւն է այր՝ 358,007, կին՝ 351,735. Գումար՝ 709,742:

Ուշագրաւ է Հայաստանի ազգաբնակչութեան պատկերը: Վերջին 3 տարուան ընթացքին, հակառակ տարեկան աճուածն 25,000ի բնական աճման, հակառակ ներգաղթի, պակասած է շուրջ 200,000 մարդ, որ գաղթած են դէպի Ռուսաստան:

Այսպիսով Հայաստանը փոխանակ լեցուելու եւ զորանալու՝ կը պարպուի ու կը տկարանայ:

ՕՐԸ ՕՐԻՆ

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԹՈՒՂԹԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ

ԿԱՐԳ ՄԸ ՓՈՓՈՒՄԻԹԻՒՆՆԵՐ

Ինքնութեան թուղթերու ամենալայնը ՕՐԵՆՔԻՆ (1926 Նոյեմբեր 30ի հրամանագիրը) 10րդ յօդուածին համաձայն, ինքնութեան թուղթերը երկու տարի արժէք պիտի ունենային, եւ սկսած ամէն տարի ամբողջ տարի պիտի նկատուէր: 1926 Դեկտեմբեր 19ի ելմասկան օրէնքին 19րդ յօդուածով այս տրամադրութիւնը փոխուած էր: Պաշտօնաթիւթը քանի մը օր առաջ նոր հրամանագիր մը հրատարակեց, որով կը սրբազրուի Նոյեմբեր 30ի հրամանագրին 10րդ յօդուածը:

1927 Յունուար 20 թուականը կրող այս նոր հրամանագրին համաձայն, ինքնութեան թուղթերը ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՏՄՆԵՐԿՈՒ ԱՄԻՍ արժէք պիտի ունենան: Այսինքն սկսած ամէն տարի ամբողջ տարի չպիտի նկատուի առաջուան պէս: Եթէ օտարական մը նոր եկած է Ֆրանսա, իր հասած թուականէն, եթէ արդէն ինքնութեան թուղթ ունի, զայն ըստ օրինի փոխել տալու պարտաւոր եղած թուականէն պիտի հաշուուի 12 ամսուան այս պայմանաժամը:

Մնփոփոխ կը մնայ յօդուածին այն հատուածը, ուր կ'ըսուի թէ ինքնութեան թուղթերը պէտք է նորոգուին պայմանաժամը լրանալու տարուան յաջորդող երեք ամսուան ընթացքին: Ուստի, հին ինքնութեան թուղթ ունեցողները պէտք է փոխեն մինչեւ Մարտ 31:

Նոյն թուականով ուրիշ հրամանագիր մը կ'ըսէ թէ ինքնութեան թուղթերու նորոգութեան ատեն առաջին երկու տարիներուն տեսարանները չպիտի փոխուին, եւ միայն նոր դրոշմաթուղթ պիտի փակցուի, եթէ երբեք ինքնութեան հատուակութիւնը, ընտանեկան վիճակը կամ արհեստը չեն փոխուած: Ինքնութեան թուղթի նոր տեսարաններ պիտի տրուին երեք տարի գործածութենէ վերջ, կամ եթէ մաքուր չեն պահուած եւ կամ եթէ հպատակութեան, ընտանեկան վիճակի եւ արհեստի փոփոխութիւն կատարուած է:

Երկու անգամ կատարուելիք երկարաձգման ատեն փակցուելիք դրոշմաթուղթերը պիտի ըլլան օրուան օրէնքին տրամադրած արժէքով:

Նոր հրամանագրին մէջ բան չըսուելի 375 Փրանքի եւ վարձու աշխատակորի մասին:

Գործադրուելու սազմապը

Մարտի 10ի սենտիքներու միութեան եւ տեղաւորման գրասենեակի վերջին տեղեկագիրը կ'ըսէ թէ՛ գործադրութիւնը չէ ազգած ճարտարագործութեան եւ առեւտուրի բոլոր ճիւղերուն վրայ: Այսպէս, մետաղագործութեան եւ շինութեան մէջ շեշտուած գործադրութիւն չկայ, իսկ ընդհակառակն կ'օրհնակարութեան, խաւաքարտէ տուփերու շինութեան, տպագրութեան, կարուձեւի, խմորեղէններու մէջ բաւական սուր է տագնապը: Ազգուած հաստատութիւնները կը ճամբեն իրենց աշխատակրները, մեծամասնաբար՝ նախ շաքաթական աշխատանքի ժամերը կրճատելով: Այսպէս, Պէնսա, Աւիոսթա կ'օրհնակարները շաքաթի երեք օր կ'աշխատին, նոյնպէս Ֆոս-Սիւր-Մէն տուփի գործարանը: Էջմի լուցիկի գործարաններու Մարտի 10ի տպարանական աշխատակրներուն մէկ երրորդը միայն մնացած է. իսկ Ֆուռնիէ մոմի գործարանը գրեթէ ամբողջովին ճամբած է բանտները: Խմորեղէնի Ռիփուառ է Գառէ տունը փակուած է եւ օրական հինգ ֆրանք նպաստ կուտայ: Ամէն օր 1500 ֆրանսացի անգործ այր եւ 1000 անգործ կիներ կը դիմեն տեղաւորման գրասենեակը: Գիմու՛մ չընդունին այլ հաշուելով, կարելի է 3500 համարել անգործներուն թիւը, օտարականներուն հետ միասին:

Գումար 19,197 հոգի:

(Լուրերու շարունակութիւնը կարգաւ Գ. Ե)

ԱՒԵԼՈՐԴ ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Երէկ հրատարակեցինք «Թայմզ»-ի Պոլսոյ թղթակցին մէկ հեռագիրը, որ ուշագրաւ է շատ մը տեսակէտներով:

Սղբողի երեսփոխան Մամուտ պէյ, մէկը համաթրքական արժաման առաջնորդներէն, հարկ դատեր է զգուշութեան հրաւեր ուղղել իր պաշտօնակիցներուն, որպէսզի կակաձնեք պատճառն պոլլեւիկներուն:

«Մեր արտաքին քաղաքականութեան գլխաւոր կէտերէն մէկն է քաղաքականութեան հանդէպ խորհրդային Ռուսիոյ Այս բարեկարգութիւնը ծնաւ երկու պետութեանց հասարակաց շահերէն եւ սոյնաման ձգտումներէն:

«Աւերող է հրատակել այնպիսի յօդուածներ որոնք այն տպաւորութիւնը կը գործեն թէ թուրքիա ծրագիրներ ունի կովկասի վրայ մեր ցեղակից եղբայրներու բնակած շրջաններուն վրայ»:

Այս, զգո՛ւշ, որովհետեւ միուսիա կրնայ ներդնայ այս պայքարին համար, եթէ նոյն իսկ հաւատարմ որ մենք ո՛ր եւ է հողի աչք չունինք մեր սահմաններէն դուրս եւ համոզուի որ իրեն հանդէպ մեր քաղաքականութիւնը ուղղմամբ է:

Լուրը հեռագրական ըլլալով, լրիւ գաղափար չի տար թուրք երեսփոխանին ամբողջ մտածութեան մասին: Բանի մը օրէն կ'ունենանք անոր ամբողջական պատճէնը: Բայց, հրատարակուած մասն ալ բաւական լոյս կը ցանէ: Մանաւանդ մեր արտաքին տղերքը, որոնք ազգաբնակչութեան հոգին կը կազմեն, շատ ալ մեկնութեան կարօտ չեն:

Կը թուի թէ «Թուրքներուն» տաքարիւն մէկ մասը անխոնհեմութիւններ գործեր է, մասնակցով թուրքիոյ երազներն ու յաւակնութիւնները՝ կարսէն մինչեւ Բագու եւ աւելի հեռուները: Այս ծրագիրը նոր բան չէ, ոչ ալ յերիւրածոյ մեղադրանք մը՝ նոր թուրքիոյ հանդէպ: Էնկիւրի այսօրուան վարիչներուն սիրտն ալ նոյնքան ուժգնութեամբ կը բարբախէ կովկասի համար, որքան թալէպաթ-էնկիւրներու շրջանին: Բայց քէմալականները խոնհեմութիւն կը համարեն փրկել երեսփոխները, եւ վերանստեղծութեան ներքին իրենց սիրակցորդ զինակիցներուն, ոռուս, հայ կամ վրացի պոլլեւիկներուն, որպէսզի կարենան հանգիստ շարունակել իրենց ստորերկրեայ աշխատանքը: Անոնք հովանաւորելով հանդերձ Աղբրէյանի այն գործիչները որոնք իրենց երկրին եւ ամբողջ կովկասի փրկիչը կը համարեն թուրքիան— իթիբակտեան թէ քէմալական — իմաստութիւն կը սեպակ սուտ-խեղձ ձեւանայ:

Թէեւ, աւելորդ են այդ զգուշութիւնները, որովհետեւ խորհրդային իշխանութիւնը շատոնց, եւ իր իսկ ձեռքով թուրքիոյ յանձնած է կովկասի բանալիները, եւ եթէ Ռուսիոյ մէջ փոթորիկ մը փրթի, ո՛չ կ'արսի դաշնագիրն է որ պիտի կեցնէ թրքական գրոհը, ոչ ալ մեծ ու պղտիկ Ձիչերիներու ստիպատութիւնը: Թուրք «անգղոյշ» հրապարակագիրները ինչ որ ալ գրեն, աւելի մեծ գաղտնիք մը յայտնած չպիտի ըլլան, քան այն իրականութիւնը որ կը ներկայացնէ Անդրկովկասի այսօրուան քարտէսը: Իսկ այդ քարտէսը՝ Ձիչերիներն ու անոր հայ, վրացի եւ թալէպաթ մանկալիները պատրաստեցին, երեսփոխական՝ եւրոպական աշխարհակալութիւնը խորտակելու խաբէութեամբ, բայց իրականին մէջ կովկասը իր բոլոր ժողովուրդներով հրաբուխի բերանը բռնելու եւ տեղը նստեցնելու համար: Աղբրի պատգամաւորին զգուշութեան հրաւերը շատ-շատ կրնայ միտթարել Երեսփոխարկաւորները եւ անոնց արտասահմանի դպիրները, որոնք երեսփոխակ կը խաչակնքեն ու սպաննու կ'երթնեն, ամէն անգամ որ էնկիւրի յաղթանակ մը կը տան: Ուրիշ խօսքով, ամէն անգամ որ հայ, յոյն կամ քրիւստոս իմպերիալիստներ կը շարժուին, տունէ-տեղէ կը զրկուին, աճուրդի առարկայ դառնալով միջազգային հրապարակին վրայ, դրամատիրական թէ խորհրդային: Այդպէս եղաւ, երբ կովկասը եւ մասնաւորապէս Հայաստանը իր բախտին ձգեցին, այդպէս եղաւ, երբ Կիլիկիան, յետոյ Թրակիան ու Փոքր Ասիան եւ ամէնէն վերջը Պոլիսը պարպեցին: Դժբախտաբար պատահականութեան չունեցան Միջագետքի եւ Սուրիոյ թրքական վերազարուումն ալ շնորհաւորելու, հեռագիրներով եւ խմբագրականներով:

Դրանալով Մամուտ պէյի ազգաբնակչութեան, մեզի համար մէկ իմաստ ունի ան.— Հաստատել, ոչ թէ հերքել թուրքիոյ ձգտումները՝ կովկասի հանդէպ: Միայն թէ, «զգո՛ւշ» դրացին չիմանայ, վերջը զժուարութեան կը մատնուինը:

Մենք այդ ազգաբնակչութիւնը ուղղուած կը նկատենք ոչ թէ թուրք հրապարակագիրներուն, այլ՝ Երեսփոխարկաւոր մարդկաններուն: Եթէ անոնք ընդունակ ըլլային ըմբռնելու բառերու մէջ թաժկուած իմաստը, եւ իրենց վզին չոքած պատասխանատուութիւնը, պիտի ցնցուէին այս մէկ հրատարակութեամբ, քանի որ չեն խրատուիր բուն իրականութեան, եւ հազար անգամ կրկնուած ազգաբնակչութիւններէ: Եւ փոխանակ դաշնակ-մուսալիական դաւադրութիւններով ցնդաբանելու, իրենց կարգին լուրջ եւ հիմնաւոր ազգաբնակչութիւն մը պիտի ուղղէին իրենց մեծաւորներուն, որպէսզի հողային եւ ազգային հաւատարկութիւնը եւ արդարութիւնը վերահաստատուին նոյն իսկ պոլլեւիկեան չափանիշով, եւ Հայաստանը դարձի, վերջապէս, բաց ձիւրձակարան մը դառնալէ:

Պիտի սխալի՞ն արդեօք...

Շ.









ՅՈՒՆԻՅԻՆ
3 ամս. 6 ամս. Տար.
ՖՐԱՆՍԱ 35 ֆ. 70 ֆ. 140 ֆ.
ԱՆԳԼԻԱ 20 շ. 40 շ.
ԶՈՒՅՑԵՐԻԱ » »
ԵԳԻՊՏՈՍ » »
ԱՄԵՐԻԿԱ 6 ամ. 10 ամ.
ԵՒՐՈՊԱ 100 ֆ. 200 ֆ.

"HARATCH"

Իմրագիր՝ ՇԱՎԱՐՇ ՄԻՍԱԿԻԱՆ
Directeur-Propriétaire : SCHAVARSCH MISSAKIAN
Rédaction & Administration : 208 bis, Rue Lafayette - PARIS (10e)
TÉLÉPHONE : NORD 57-82 MÉTRO : LOUIS-BLANC ou JAURÈS
Հասցեի փոփոխման համար պետք է վճարել 2 ֆրանք

ՇԱՎԱՐՇ
29
ՅՈՒՆԻՅԻՆ
1927
29 JANVIER 1927

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

ՄԱՏՆԻՉՆԵՐԸ ԵՒ ՄԱՏՆՈՒԹԻՆԸ

Ամէն անգամ որ այս կամ այն երկրի ոստիկանութիւնը ձեռնարկ մը կը կատարէ օտար համայնավարներու դէմ, մեր կարմրատուտուն եւ սեւ-սիրտ հակառակորդները կը ճառեն...

Ճիշտ ինչպէս ոճրագործը սպանութիւնը կատարելէ յետոյ, բնագործար կը փնտնէ եւ կը դեզերի ոճրին վայրը, մեր փոքրդի հակառակորդներուն մէջ ալ, անոնք որ թրծուած են իսկական մասնիչի հոգեբանութեամբ, մատնութիւն եւ մատնիչ կը փնտնեն իրենց բողոքիչը:

Այս ածան ամբողջութեան պատրուակ դարձեր է, այս անգամ, ուրիշ հայ համայնավարներու արտաքսումը Սեւ լանիկէն:

Այդ ողորմելի զոհերը, որոնց մէջ պակաս չեն հասարակ խաչագործներ, իրենց իսկ ընկերներուն ձեռքով դիմակազերծ եղած, գործեր են առանց աջ-ձախ նայելու, գրեթե ու խօսքեր են իբրև հաւատարմութիւն կոմունիստի հանգանակին: Անոնք թերթեր ալ ունին, ուր կ'արտայայտուին իրենց ուղած եղանակով, եւ համաձայն կոմիստէրնի հրահանգներուն:

Լաւ կ'ընեն թէ զէշ, իրենց զիտնալիք բանն է: «Յեղափոխականներ են, եւ հարկաւ աչք առած են ամէն վտանգ, արտաքսում, աքսոր, բանտ եւ ի հարկին կախարան: Այսպէս էին ճշմարիտ յեղափոխականները, երբ թողութիւններ կը բաժնէին, սարը կը բարձրանային կամ մահափորձ կը կատարէին: Քանի որ ազատ-համարձակ ասպարէզ կը կարգան քաղաքներ պետութեանց, անոնց իսկ հողին վրայ, պէտք է արիւարար տոկան ամէն հալածանքի միջեւ, «ի ծագելն արեգակն»:

Արդ, հայ համայնավարները առանց սեթեւեթի կը գործեն ամէն տեղ, եւ պաշտօնական օրկաններ ունին Փարիզէն մինչեւ Ամերիկա: Կը զրեն ու կը տպեն ինչ որ գոց ըրած են: Գործնական կեանքին ալ կը մասնակցին, այս կամ այն պատենու-թեամբ: Միայն այս գործունէութիւնը արդէն երեւան կը հանէ իրենց իսկական դիմագիծը: Եւ որովհետեւ իւրաքանչիւր քաղաքի երկրի մէջ պետութիւնը հակոդութեան բարդ եւ լայն ցանց մը ունի, այլեւս պէտք չկայ «ժուռաւորներ կամ «ժուռաւորներ» երեւակայելու, եւ իրենց տխմարութեան կամ նոր-ընծայութեան մեղքը ուրիշներու վրէժն փաթթելու: Աթէնքի մէջ Նոյեմբեր 29ի տօնակատարութեան առթիւ, Յունաստանի արտաքին նախարարութեան մամուլի զիւանի մտօրէնքը, Պ. Մոսքովուց, հարկ դատեց խմբագրական մը հրատարակել «Մէտաթէ տ'Աթէն»ի մէջ, ուր յատկապէս կը մատնանշէր թէ այդ հանդէսը համայնավարական ցոյց մըն էր, եւ ոչ թէ ազգային տօն մը: Եւ աւելորդ անգամ մըն ալ կը յիշեցնէր Հայերուն, թէ իրենք հիւր են Յունաստանի մէջ եւ պէտք չէ դուրս ելլեն պատշաճ գործունէութեան մը սահմանէն: Հանդէսին ներկայ եղած եւ խօսած էին երկու յոյն համայնավարներ, որոնք հրաւիրեցին են հայ երիտասարդութիւնը՝ «ձեռք ձեռքի տալ իրենց դասակարգային եղբայրներուն»:

Անկէ առաջ եւ անկէ յետոյ, Յունաստանի պետական շրջանակները եւ մամուլը յաճախ ազգաբարձրութիւններ ուղղած են հայ գաղթականներուն, ամէն անգամ որ պոլշեիկներ ցոյց մը կատարուած եւ քանի մը հայ թափթփուքներ աչքի զարկած են: Սելանիկի մէջ, այս ողորմելիները թուղթի կտոր մըն ալ կը հրատարակեն, որուն քով պիտի գունատէր հոչակաւոր ծապլլարը: Բայց կարճ կայանք:

Արդ, որո՞նք մեղքը կ'անեն, հիմա որ ոստիկանութիւնը գործի ձեռնարկներ է, նոյն ինքն ներքին նախարարութեան հրամանով: Այդ նոյն նախարարութեան խմբագրի մը հարցունքներուն պատասխանելով, յայտներ են թէ «Ապահովութեան Տեսչութիւնը Փանկալուսի շրջանէն իսկ տեղեկութիւններ ունէր հայ համայնավարներու գործունէութեան մասին: Այդ մասին հանգին թղթածրարներ կան: Հայ համայնավարները հիանգիտ չ'ընացին եւ մտնաւորապէս երեսփոխանական ընտրութեանց առթիւ կը ջանային թուղթիկներով պողտրել գաղթականներուն միտքը: Ինչպէս կ'առավարուէին չէր քննարկ եւ ուշի-ուշով կը հետեւէր անոնց քայլերուն... Հայաստանի խորհրդայնացման հիանդէսը համայնավարական ցոյցի վերածեց են: ոստիկանութեան քիչին տակ կեցցէ՛ կարմիր Յունաստանը պուսացած են»:

Թերթերը գրեցին թէ Սելանիկի շոշորթները արտաքսման որոշումը լսած առեն, դիմեր են երկու համայնավար երեսփոխաններու բարեխօսութեան: Ուրեմն, այստեղ ալ հարկ չեն դրատեր ծածկել իրենց հանգամանքը:

Կը հարցնենք նորէն, ինչու՞ ճղակտոր կ'ըլլան հիմա, շնորհ ստանալու համար: Եւ յետոյ, ո՞ր է, այստեղ, մատնութեան պարագան: Ո՞ր են անունները եւ փաստերը:

Կրնան արհեստով գաղտնի գործակալներ գտնուել ամէն երկրի ոստիկանութեան մէջ: Բայց անոնք որ իրենց ապուշութիւնը քաւած առեն, «Դաշնակցներու կամ ուրիշներու մասը կը տեսնեն ամէն տեղ, լաւ կ'ընեն որ կամայ մը քաշուին իրենց պատենանին մէջ, եւ լուսութեան մէջ պարտկեն իրենց սեւ հողին. որովհետեւ երբ կարգը գայ իսկական մատնութեան կամ մասնիչներու մասին խօսելու, Դաշնակցութիւնը դիտէ թէ ո՞ր կ'ընեն, այս կամ այն հանգամանքով...»

ՄԱՍՈՒԼ

ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՌԹԻՒ

Գահիրէի մեր պաշտօնակիցը, «Յուսաբեր», յոգնութիւն կրեր է երեւան հիանելու ուսմակալար կարգ մը թերթերու անբարոյականութիւնը, որուն ապացոյցը նոր չէ որ կը տեսնենք:

Ինչպէս գրած էր Պէյրութի մեր թղթակիցն ալ, ուսմակալար «Արեւ»ը այն աստիճան լիք է գրգռիչ սուտեր հրատարակեց Պէյրութի ուսմի կարգ արկածին առթիւ որ, իր աշխատակից, թղթակիցն անգամ ընդվզեցաւ եւ բողոքի նամակ մը ու հրա. Ժարգարի մը ուղղեց թերթին խմբագրութեան: «Յուսաբեր» հիմնուելով իր աղբիւրներուն եւ այդ իսկ բացմանակին վրայ, անգամ մըն ալ կը շեշտէ. — «Սո՛ւտ է թէ Դաշնակցութեան արածը խաղաղութեան է, սո՛ւտ է թէ «Նոր Փրօնիկ»ի խմբագրութեանը ձեռքբերութեան են, սո՛ւտ է թէ վերադարձներ կան, սո՛ւտ է թէ խմբագրութեանը հրահանգուած է մեկնել քաղաքէն, սո՛ւտ է թէ զինամթերք գտնուած է, սո՛ւտ է թէ այս առթիով հալածանք սկսուած է Հայերու դէմ, սո՛ւտ է թէ կարգ մը Հայեր դատապարտութեան դրութիւններ ներկայացուցած են իրենց օտար տէրերուն»:

(Այս բոլորը հիարեր ու գրեր էին «Արեւ»ն ու փարիզեան բուրձի կտոր մը):

Մեր պաշտօնակիցը կ'եզրակացնէ արդար գայլոյթով. «Պղծութեան եւ անբարոյութեան այս գործը լի լաթերով է, որ պիտի կրթելի այս ժողովուրդը, այն ալ... օտարութեան մէջ: «Անա ճշմարիտ հայերն այն անաւոր բարքերուն, այն գարհուրիկ բարոյականին, այն խաթարուած ու արւանքած ըմբռնութեանը, որ կ'իշխէ հայ հայրենիքէն ու հայ ժողովուրդէն վերջնապէս ուժացած այս գարհուրիկ խմբակին մէջ»:

ՈՂ ԿՈՒՏԵՐ ՄԱՍԻԸ

Աշտարակի (Հայաստան) ժողովրդական դատարանը, Յունուարի կէսերուն պատիժներ սահմանած է կարգ մը զիջացիներուն, որոնք «կրօնը շահագործած են» իրենց նպատակներուն համար: Երբակի երկրաշարժէն հետք, զիջելու մէջ տարածուած է այն համոզումը, թէ Սատուած պատիժ զրկուած է ժողովուրդին անհատականութեան պատճառով: Յովհաննա վանքի զեղձկուհի Տէր-Ստեփանեանը, որ մը, յայտարարած է, թէ զիջելու իրեն ներկայացած է Աստուածածինը եւ բաժնէ թէ, իբրև պատիժ Հայաստանի մէջ տիրող անհաստատութեան, Լէնինականի տեղը պիտի կազմուի մահաբեր ծով մը եւ Հայաստանի անասուն ուժ տարածութեան մէջ մեծ համաճարակ մը պիտի ծաւալի: Տէր-Ստեփանեանը, եկեղեցիի մէջ, «Ներգրեց» կը տեսնէր եւ կը յայտարարէր զիջացիներուն թէ «Սուրբ Կարապետը» ըսած է իրեն, որ աղէտէն ազատելու համար պէտք է մատաղ ընել: Ժողովուրդի ահազին բազմութիւններ կը փութան եկեղեցի՝ բերելով իրենց հետ մատաղ անասուններ եւ ուրիշ կարգի նուէրներ, որոնք կ'անցնէին զիջելու տէրերին, Տէր-Ստեփանեանի եւ կարգ մը ուրիշ գործակիցներու ձեռքը:

ՕՐԸ ՕՐԻՆՆ

Գործադրկութեան սպանալը

Երեւոյ. Ժողովը երէկ դարձեալ զբաղեցաւ գործադրկութեան տաքնապի եւ ապրուստի սղութեան խնդիրներով, շարունակելու համար անցած ուրբաթ օրուան վիճարանութիւնները: Անցած ուրբաթ օր միայն երեք երեսփոխաններ կրցած էին խօսիլ. տակաւին հարցապնդումի համար արձանագրուած են եօթը երեսփոխաններ, որոնց պիտի պատասխանեն Աշխատանքի նախարար Պ. Ֆալիէր եւ վարչապետ Փուշկառն: Վիճարանութիւնները շարունակուեցան մինչեւ ուշ առտն:

Կարգ մը գաւառներէ առնուած վերջին տեղեկութեանց համաձայն, տեղ տեղ գործադրկութեան տաքնապը մեղմացած է: Լիմոսի մէջ փակուած կոշիկի գործարանները վերաբացուած են եւ 2300ի տեղ 800 անգործ միայն մնացած է: Մաքոնի մէջ ալ 2000 բանուորի վրայ միայն 130 անգործ կայ, մեծ մասամբ «անբարձապիւններ»:

Փարիզի Արհեստակցական Միութեանց կեդրոնական վարչութիւնը Փարիզի եւ արուարձաններու պատերուն վրայ փակուած կոշիկով բոլոր գործադրկները կը հրաւիրէ արձանագրուել իրենց պատականած թաղապետութեանց, ինչպէս նաեւ տեղաւորման գրասենեակներուն մէջ, որպէսզի կարելի ըլլայ անգործներու ճշգրիտ վիճակագրութիւնը կազմել:

Ռօշէլի Բաղաքապետութիւնը անգործներուն գործ հայթայթելու համար կարգ մը հանրօգուտ շինութեանց ձեռնարկած էր եւ բանուորները ութ ժամ կ'աշխատէին, մէկ ժամուան համար ստանալով 2.50 ֆրանք:

Քաղաքապետութիւնը քանի մը օր առաջ որոշեց օրական վեց ժամ միայն աշխատեցնել եւ ժամը 2 ֆրանք վճարել: Ասոր վրայ բանուորները գործը ձգեցին եւ ցոյցեր կազմակերպեցին փողոցներուն մէջ «Լինիէրնախօսալ» երգելով եւ «հաց» վերատարութեամբ նշանատարակներ պտտեցնելով: Յուցարարներու պատուիրակութիւն մը ներկայացաւ քաղաքապետարան, ուր բացատրուեցաւ թէ եղածը պարզ բարեփոխութիւն է՝ անգործներուն հաց հայթայթելու համար: Բանուորները վերսկսան աշխատել:

Ներկայ տաքնապին առթիւ օտար գործաւորներու Ֆրանսա մուտքը արգելելու համար ներքին նախարարութիւնը որոշեց սահմանին վրայ աշխատանքի պայմանագրութեան հետ միասին անցազիւր ալ պահանջել նորեկ օտար բանուորներէն: Կարգ մը երկիրներէ եկող օտար բանուորներ առանց անցազիւր կը մտնէին Ֆրանսա եւ աշխատանքի պայմանագրութիւնը բաւարար կը նկատուէր:

Յունաստանի հայ հաւայնաւարներու ԱՐՏԱՔՍԱՆ ՄԱՍԻՆ

Գրած էինք թէ 8—9 հայ համայնավարներ հրաման ստացած են հեռանալ Սելանիկէ: Յունաստանի ներքին նախարարութիւնը այս մասին հետեւեալ տեղեկութիւնները հաղորդած է «Նոր Օր»ի. — «Հանրային Ապահովութիւնը, փանկալուսեան շրջանէն սկսեալ, տեղեկութիւն ունէր հայ համայնավարներու գործունէութեան մասին: Այդ խնդիրն համար անազնի թղթածրարներ կան: Երբ, Անափի քաղաքուած հինգ հայ համայնավարներու քաղաքումն պահմուն, հաւաստիքներ տրուեցան անոնց անմեղութեան մասին, ներում շնորհուեցաւ աքսորեաններուն: Սակայն հայ համայնավարները խրատ չառին, մասնաւորաբար երեւոյ. ընտրութեանց ժամանակ թողութիւններ հրատարակեցին, վերջերս, Հայաստանի խորհրդայնացման տարեդարձին առթիւ կազմակերպեցին հանդէսներ, որոնք իրական համայնակց ցոյցերու երեւոյթը ստացան, ոստիկանութեան քիթին տակ «կեցցէ՛ կարմիր Յունաստանը» պողոցային կառավարութիւնը անշուշտ, չէր քննարկ, եւ ուշի ուշով կը հետեւէր: Յունաստան չի ներքեր որ Հայերը իրենց հիւր վիճակով, վիստեն պետութեան շահերուն: Յարգելական այս արարքներու թիւադրանքով, Ապահովութեան Լնդէ. Տնօրէնութիւնը ստիպուած է աքսորել 8 հայ համայնավարները»:

Կացուրիւր Պալլաճիւրու մէջ

Փրակայէն կը հեռագրեն թէ Երեսփոխար Արտաքին Յանձնաժողովին առջեւ Չեխոսլաւիոյ արտաքին նախարար Պէնէշ պատասխանելով իրեն ուղղուած հարցունքներուն, յայտարարած է թէ ո եւ փոփոխութիւն չէ կրած Փոքր Համաձայնութեան կացութիւնը եւ անոր անդամներուն փոխադարձ յարաբերութիւնը:

Պէնէշ աւելցուցած է որ կոմս Պէթլէնի Հոմ ալցելութեան դէմ ըլլալիք ո եւ է առարկութիւն չկայ: Պէտք չէ մտահոգուել այն գրոյցներէն թէ Իտալիա կրնայ դաշնակցել Հունգարիոյ հետ, ընդդէմ ուրիշ պետութեանց:

Մէկ կողմէ, Չեխոսլաւիոյ բարեկամական դաշնակցի ունի Իտալիոյ հետ, միւս կողմէ Իտալիոյ շահը կը պահանջէ համաձայնի Չեխոսլաւիոյ հետ, ինչպէս կ'ընծագրելով, Ռուսաստանի եւ Եւրոպայի հետ: Պէնէշի կարծիքով միջազգային կացութիւնը բնաւ մտահոգիչ չէ, հակառակ ջղայնացող որոշ նշաններու: Չեխոսլաւիոյ ներկայ կացութեան կը հետեւի ուշադրութեամբ, բայց հանդարտ ու շրջահայեաց, կարենալ հետապնդելու համար խաղաղութեան վրայ հիմնուած իր քաղաքականութիւնը: Ռուսիոյ հետ յարաբերութիւնները չեն փոխուած. Վատիկանի հետ ալ ո եւ է բանակցութիւն չկայ:

ՈՍԻՐՈՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

ՌԱՐԻՈՒՄՈՒՄ ?

Կատարմամտոյցի Պէյրութի ներկայացուցիչ Պ. Չարիս քարոյթ տուած տեղեկութիւններուն համաձայն, Պէյրութի եւ շրջակայներու անտեսական պայմանները այս անգամ լաւ ընթացք մը ստացած են, շնորհիւ Ֆրանսական Ֆրանսիոյ եւ սուրբալիան դարմին բարեւաւան, որ հետզհետէ փոտափոխուին կը ներշնչէ: Սուրբալիաներու եւ Հայերու հոծ գաղթին պատճառով, անգործութիւնը վերցաւ: Ամէն մարդ աշխատանք ունի: Այնպէս որ Պէյրութի օգնութեան մարմինները, փոխանակ աշխատանք ստեղծելու, ինչպէս կ'ընէին անցեալ ձմեռ, պարտաստ գործերու կը մղեն թեկնածուները: Օգնութեան մարմինները, այժմ, գտնուով աշխատանք կու տան այն գաղթներուն միայն որոնք չեն կրնար մրցիլ աշխատանքի շուկային մէջ: Կատարմամտոյցը անոնց կը բաշխէ, իր կողմէ, նաեւ ալիւր: Միւս կողմէ, Պէյրութի ստոյգապահական վիճակը, գլխաւորաբար գաղթականներու մէջ, շատ գէշ է, իբրեւ հետեւանք համահարկներու, կարմիրտի, մալարիայի, որոնք տարածուած են կապաններուն մէջ: Այս հիւանդութիւնները աւելի փոխազուար կը դառնան, երբ երկար գրկանքներու շարունակութիւն մը կը դառնայ կեանքը: Օրինակ, երբ ընտանիքին հայրնալները անստաղութեամբ եւ սնունդի պակասով աւելի ենթակալ պիտի դառնան հիւանդութեանց: Կ'ըսուի թէ մինչեւ հիմա հազարէն աւելի մահեր պատահած են հայ գաղթականութեան մէջ, իսկ այս ձմեռ: Սակայն երբ ձմեռը անցնի, աւելի լաւ օրեր կը սպասուին գարնան: Այն առնել կը խորհուի վերցնել ներկայ գաղթակալանները, աւելի յարմար տեղերու մէջ հաստատելու համար ընտելութիւնը:

ՊՐԱՋԷԼԻԱ ՄԻ ԵՐՔԱԲ

Ս. Փաօլոյն կը զրեն թէ հայ գաղթականները խեղճ վիճակի մէջ կը գտնուին նոս:

Անաւարտութեան պատճառով, 30 սուրբ տուգանքի դատապարտուած է Հայերու ընտելած շէնքին սեփականատէրը, եւ հրաման տրուած է անմիջապէս պարտել զայն, հակառակ պարտապիս սպանալով գոյքերը այրել: Եկեղեցիի խնամակալութիւնը յաշտած է պարտուած համար ամիս մը պայմանաժամ ստանալ: Սակայն շատեր ներթապէս անկարող են շէնքը ձգելու: Եւ թիւրեւ երկրորդ եւ աւելի մեծ տուգանքի մը դատապարտուին:

Տնտեսական տաքնապը շատ սուր հանգամանք մը ունի: Բնաւարանի պակասը, գործադրկութիւնը եւ սղութիւնը յուսահատութեան մասնած են Հայերը:

Շատեր կը զղջան որ Պրազիլէս գաղթած են, խարուելով անպատասխանատու մարդոցմ: Ոմանք իրենց օրապահիկը հազիւ կը շահին կօշիկ ներկելով կամ ամբիկեան պիտակ ծախելով:

ԽՈՂԱՐԱՆԻՆ ԴԵՄ ԹԷ ՕՏԱՐԻՆ

Պոլսոյ «Ճիւղերի լիթ» եւ «Ազգամ» թերթերը բուռն պալքար մը բացած են Եւրոպայի խաղաքանին մասին:

Ազգամ զիտել կուտայ:

«Շատեր իրենց տարիներու վաստակը ամառան մը ընթացքին հակեցուցին Եւրոպայի մէջ: Թուրք կրնան հազարաւոր ուղիներ նետելին բարտանդին մէջ եւ թշուառութեան մատնուեցան: Մենք կ'աշխատինք օտար գրամազուխ բերել երկիր, մինչդեռ այսպէս ամիսը 400.000 սոկի կ'երթայ անգիւր Իսապիլա»:





### Թուրք-վրացական գործակցություն

Յունուար 19ին Պաթլուսի մէջ գումարուած է թուրք-վրացական անասնաբուժական խորհրդատուական ընկերութեան հիմնադրութեան անձնակազմը, որու նպատակն է միացեալ շահերով մշակել միջոցներ՝ անասնաբուժական հիւանդութեանց դէմ պայքարելու համար: Թուրքերու կողմէ խորհրդատուական կը մասնակցէին Պաթլուսի նախկին հիւանդատու իպրահիմ թալի պէյ, անասնաբուժական բաժնի վարիչ Ալի Բիզա պէյ եւ ուրիշներ: Վրացական կողմէ փրոֆ. Փաւլուշբոֆ, որ այդ նպատակով դրուած է Մոսկուայէն:

### Սուրիոյ մարզականի պայքարներ

Երուսաղէմէն կը հեռագրեն թէ Սուրիոյ մարզական Պ. Հանրի ֆուսո Յունուար 25ին յիշեալ քաղաքը հասած է եւ երկու օր հիւր մնացած է Պաղատինի անգլիական մարզական կորուստը կարգ մը արաբ ազգայնական թերթեր ժողովուրդը հրաւիրած են ընդհանուր գործադուլի, բողոքելու համար Սուրիոյ իրենց արաբ եղբայրներուն հանդէպ ֆրանսական քաղաքականութեան դէմ: Մամուլին կողմէ անհետեւանք մնացած է:

Մարզական արդէն իսկ մեկնած է Եգիպտոս, ուր պիտի տեսակցի Յունուար թագաւորին եւ անգլ. մարզական լորտ Ճորճ Լոյտի հետ: Եկեղայ «Վամարթին» շոգենաւով եւ Մարտիոյ ճամբով Ֆրանսա պիտի գայ:

### Պոլլեիկները եւ Իսախա

Ֆրանսիացիները դաշնագրին հրատարակութեան առթիւ, դարձեալ օրակարգի վրայ եկաւ Պեսարապիոյ խնդիրը: Եւրոպայի պոլլեիկեան բոլոր ներկայացուցիչները գործադարձներու խորհուրդին կողմէ բողոքի ծանուցագրի ներկայացուցին դաշնակից պետութիւններուն: Ռաքովսքի Պրիանի մօտ կատարած դիմումէն վերջ, այս անգամ ալ ծանուցագիր մը արբուած է Մուսուլիսին, որով խորհրդային կառավարութիւնը խտրելու կը բողոքէ Պեսարապիոյ մասին Ռուսաստանի պահանջներուն հանդէպ իտալիոյ բռնած դիրքին դէմ: Մասնաւորաբար կը յիշուի Մուսուլիսի նամակը զօրավար Ավերէսքուի, որ չի պատշաճիր իտալեխորհրդային բարեկամութեան եւ կը դժուարացնէ Պեսարապիոյ խնդրին խաղաղ կարգադրութիւնը:

Քեթքէնցէի տեղ շոտի սովետական զեպան նշանակուած ֆամէնէֆ Մոսկուայէն ճամբայ ելած է դէպի շոտ:

### Փանկալօյր պիսի փախցնէին

Աթէնքէն հեռագիր մը կ'ըսէ թէ հելլէն կառավարութիւնը Յունուար 26ին կէսօրէ վերջ թորփիւհալածով մը եւ խիստ հսկողութեան տակ, կրէտէի իզգէտտին ամրոցը փոխադրեց Յունաստանի նախկին զինուորացի զօր. ֆանկալօյր:

Նախարարական խորհուրդը հապճեպով արտակարգ նիստ գումարած էր զիշերը խորհրդակցելու համար զինուորական կացութեան մասին: Զօր. ֆանկալօյր բարեկամներու շրջանակին մէջ կարգ մը շարժումներ կատարուեցին կը ներշնչէին: Անոնք կը ծրարէին յետադիմական շարժում մը առաջ բերել ներկայ միացեալ կառավարութեան դէմ: Վերջերս նաւային շրջանակներու մէջ դաւադրութիւն մը երեւան հանուած է — ֆանկալօյր բանտին փախցնելու մասին: Կառավարութիւնը ատենէ մը ի վեր տեղեկութիւն ունէր այս ձեռնարկներէն, սակայն ժողովուրդին մէջ զրգուրթիւն առաջ չբերելու համար դաւադրներուն գաղտնապէս ազդարարած էր դադրեցնել իրենց գործունէութիւնը: Սակայն երբ անոնք մտիկ չըլին, կառավարութիւնը որոշեց աւելի կտրուկ միջոցներու դիմել, որով հետեւ ֆանկալօյր կողմնակիցներուն դէմ պայքարելու ուժ կը զգայ իր մէջ: Ուրիշ ձեռնարկներու մասին կը սպասուի:

Փանկալօյր պիտի դատուի միայն երեսփ. ժողովին կողմէ, որ պիտի գումարուի իբրեւ Գերագոյն ատենան, քանի որ Ծերակոյտը դեռ չէ կազմուած:

### Ֆրանսա դարձեալ ոսկի կը դրի Ամերիկա

Ֆրանսական կառավարութիւնը կը շարունակէ ոսկեզրամ դրի Ամերիկա: Յունուար 27 թուականը հեռագիր մը կ'ըսէ թէ «Ֆրանս» շոգենաւով Նիւ Եորք հասած է 142 միլիոն ֆրանք արժէքով ձուլ ոսկի: Շոգենաւը ցամաք մօտենալուն պէս 200 միտուկ դուրս հանուած եւ զրահապատ ինքնաշարժներու մէջ դրուած է:

### Բրիտանու կը վիրաւորէ յոյն մը

Փափա Էֆթիմ, վերջերս, հին ամառի համաձայն իրազր ծով նետած պահուց, արկած մը կը պատճառէ: Այն վայրկեանին, երբ արթթիւն վերջին վանկը շրջանակէն «Բրիտանու» ծով կը նետուէր, անթիւրթ մը առաջ ծով նետուեցաւ յոյն երիտասարդ մը, որուն գլուխը հանդիպելով վիրաւորուեցաւ: Փափա Էֆթիմ առաջին կ'արդարացնէ ինքզինքը:

— Մենք Բէսիկի կողմերը ծով չունէինք եւ վաթ չենք: Սակայն յանցանքը իմն չէ, ինչո՞ւ վիրաւորեալը ծով նետուեցաւ, երբ դեռ «Բրիտանու» ծով նետուած չէր:

Թուրք թերթերը, այս արարողութեան առթիւ, պատկերազարդուած են խաչերով, չափազանցակերպ, եպիսկոպոսական գաւազաններով, բուրվաններով...:

### «Հօփ» ներուները

Ամերիկայի Բիլլիէն քաղաքին Հօփի նախկին ատենապետը, Հօփի անդամներէն Պ. Նիկոլեանի 3000 սողար արժէքով գորգերը թողուցած ըլլալով, բանտարկուած է:

Մարտիային կը հաղորդեն թէ Կիրակի օր միջադէպ մը պատահած է Հօփի ժողովին մէջ: Հօփը ժողով կը գումարէր, ընտրելու համար իր նոր վարչութիւնը: Հօփի անդամներն ալ, (հին Հնչակեաններ, որոնք Հայրենիքի Օգնութեան Մարմին մը կազմած են) կ'ուզեն մասնակցել խորհրդակցութեան: Հօփը կը մերժէ. Հօփը մտիկ չընէր ու ներս կը մտնէ: Կը սկսի իրարանջուած մը: Ոստիկանները կը միջամտեն եւ դուրս կը հանեն Հօփի անդամները: Սակայն այս վերջիններու ցուցմունքին համաձայն ոստիկանները կուզան համայնապար փնտռել ժողովին մէջ, որ կը ցրուի...:

Սեպտեմբերին կը հաղորդեն թէ Հօփի զեղծումներուն ինչպիսիք հելլէն դատարանին առջեւ դրուած է: Հօփի վարչութեան անդամները, իբրեւ զեղծարար, բանտարկել տուած են Արսէն Մուրաֆեանը, որ վերջերս մամուլին մէջ մերկացուցանելու ըրաւ Հօփի շահատակութեան մասին: Միւս կողմէ բանտարկեալ Մուրաֆեան ալ կ'ամբաստանէ իր պետերը:

### ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ՓՈՐՈՂԻ ՀՍՄԱԼՍՍՐԱՆԻՆ ԸՆԴՏ. տեսուչ նշանակուեցաւ Սթրազբուրգի համալսարանին տեսուչ Պ. Սէպալթիէն Շարլէթի, Փոյ Լաֆիի տեղ, որ մեռաւ քանի մը օր առաջ:

### Մ. Ա. ԿՈՍՏԱՆԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՓԱՐԻՋԻ ՄԷՋ

Վաղը Կիրակի ժամը 8-30ին (կը վերջանայ 12ին) THÉÂTRE ALBERT 1er, 64, Rue Rocher. Métro: St-Lazare Կառնակցութեամբ փարիզի Տրամվային կը ներկայացնէ:

### ՇԵՔՍՊԻՐԻ «ՕԹԷԼԼՕ» (5 արք)

«Օթելլօ»-ի դերը կը կատարէ Պ. Մ. Ա. ԿՈՍՏԱՆԵԱՆ, «Տէգալեմոն»-ի դերը կը կատարէ Տիկ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ-ԿՈՍՏԱՆԵԱՆ: Գիները շատ ատեն 20էն 5 ֆր.: Օթելլօները՝ (6 անձի 100 ֆր. եւ 4 անձի 60 ֆր.): Տոմսակները կը ծախուին բոլոր հայկական ճաշարանները, իսկ ներկայացման օրը Թատրոնի կիշէն ժամը երեկոյան 5էն:

### ՇԵՔՍՊԻՐԻ ԱՂԷՏԵԱԼՆԵՐՈՒՆ ՀՍՄԱՐ ՄՈՒՓԷԼԷԻ ՅԱՆԿ

Դ. Կուկանան 30, Մ. Յակոբեան 50, Գ. Սարգիսէկեան (ուսանող) 20, Mme X. (Ֆրանսուէ) 10, Ռուսեր՝ Mr. V. 5, Mme V. 5, N. L. 10, P. 10, Ռաֆ. Սարգիսեան (ուսանող) 30, Ֆրանսուէներ՝ De Robertier 10, De Bellois 20, G. Granier 5, M. Foucault 10, X. 5, Colonel Picot 10, Kléber Saillen 10, F. Durand 15, F. Dubail 5, Աշոտ Շահգէլեան (ուսանող) 20, Զաւէն Աթիսեղեան (ուսանող) 10 ֆրանք: Գումար 290 ֆրանք: (Տես «Յառաջ» 23 Յունուար):

Այլի Տիկ. Կ. Տոնիկեան, Պ. Վահան Տոնիկեան եւ ազգականները ցաւօք սրտի կը ծանուցանեն դաւադրէտ մանր իրենց գաւկիւն, եղբոր եւ ազգականին:

### ՏԻԱՐ ԵՐՈՒՆԴԻ ՏՈՆԻԿԵԱՆԻ

որ արկածով մեռաւ Ճաղիկ հասակին մէջ:

Յուղարկուողութիւնը տեղի կ'ունենայ այսօր շաբաթ, 29 Յունուար, ժամը 9ին փարիզի Հայոց եկեղեցին, 15 ըրե թանկուծոմ:

### ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հ. Յ. Գ. ՄԷՆԹ ԷՔԻԷՆԻ ԸՆԴՏ. Ժողովը վաղը Կիրակի օր ժամը 2ին ըրե տը Լա Հուար, Կրան Բաֆէ տե Գուէ: Բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է:

Հ. Յ. Գ. Լիոնի բոլոր խումբերու և վիճարանական ժողովը վաղը Կիրակի առաւօտեան ժամը 9ին, Էմիլ Զօլայի վերնայարկը 127-129 Rue Boileau:

Հ. Յ. Գ. Մարտիլի «Պատանի» միութեան ընդհ. անդամական ժողովը վաղը Կիրակի կէս օրէ ետք ժամը 8ին 1ին իր Գրադարան-Բնութագրարանին մէջ:

### ՄԱՐՏԻՆՈՅ

Պատանի խումբի ընդհ. ժողովը վաղը Կիրակի իրիկուն ժամը 8ին, Ռիւ Ռէֆիլուէթ թիւ 63, Ներկայանալ անհրաժեշտ է:

### ՏՐԱՐԵՏԻՆՈՅ

Հայր. Միլիտան Յունուար 22ի վերջնակցութեան շահեցանք թիւ 297 մէկ արքային (Բուստան), 134 մէկ ստորական «Մարտոյ», 52, 485, 443, 53, 432, 5, 147, 287 դաւադրանք երեղէններ: Գիւնի շահուց տուեցով միայն, գումար կամ անձնաւոր, Հ. Տէր Յովհաննէսեանի, 8 ըրե տը Լա Մէրի-Ժանիկի (Մէր):

### ՆԱՐԵՎԱՏՈՒՓ

ՊԵՐՄԻ, Պ. Յ. — Ներ ուղած հասցէներն են. — 1. V. Chouchanian, Ecole Nationale d'Industrie Laitière, Mamirole (Doubs), 2. G. Ghazarossian, c/o F. Hékimian, Banque Asbarez, Philippople (Bulgarie):

### ՆՈՐ ՓԻՒՆԻԿ

— ԵՌՕՐԵՆԵՑ —  
Հասցէ. — B. P. 587, Berouth

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ**  
POLYCLINIQUE DE BELLEVILLE  
29, Rue (Place) des Fêtes, Paris, XIX. Tél. Nord 96 - 61  
Տէր եւ Տիպոյն՝ **ՏՕՔԹ. ԳՐԳՈՅԵԱՆ**  
Բացուած է Պէլլիի ընդարձակ բուժարանը (Polyclinique) ուր հայ եւ ֆրանսացի կարող մասնագէտ բժիշկներու միջոցով ուշ ուշով եւ խզմտօրէն կը քննուին ու կը դարմանուին գիտական նոր մեթոտներով ամէն տեսակ ներքին, կանաչ տղայոց, վնասակար, սեռամիզային, վիրաբուժական, ինքնատես աչքի, բերան, կոկորդի, ականջի, բերանի ու ականջի հիւանդութիւնները:  
Հիւանդները կ'ընդունուին ամէն օր առաւօտեան ժամը 8ին: Երեկոյան ժամը 8: Կիրակի եւ տօն օրերը մինչեւ կէսօր:  
Գիները ՁԱՓԱՌՈՐ եւ ՀԱՆՐԱՄԱՏՅԵԼԻ  
Մտիպողական պարագային հիւանդները կը դարմանուին իսկ գիշերը:  
Ու եւ բժիշկի դիմելէ առաջ կը խնայարարուի անգամ տան Polyclinique դիմել՝ մասնագէտ բժիշկին լուրջ խորհրդի ստանալու համար:  
Հարողակցութեան միջոցներ՝ Métro: Place des Fêtes, tobuss: AV. AP. N. Nbis, BC. FB. Tramway 26.

**ՀԱՇՄԱՐԱՆ «ՅԼՕՐԻՍ»**  
61, Rue Monsieur le Prince, Paris (6e)  
ՄԵՔՐՕ ՕՏԷՕՆ ԿԵՄ ՍԷՆ ՄԻՇԷԼ  
ԱՐԵԻԵԼԵԱՆ ԵՒ ԵՐՈՒՆԴԻ ՏՈՆԻԿԵԱՆԻ ԿԵՐԱՎՈՐՆԵՐ ԱՆԹԵՐԻ ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ

**ՏՕՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ**  
ՄԱՍՆԱԿԵՏ ՆԵՐԿԻՆ ՄՈՐԱՅԵՆ ԵՒ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՌԱՆԳՈՒԹԻՒՆ  
126, Rue du Faubourg St. Denis  
Métro: Gare de l'Est  
Téléphone: Nord 84-04  
Ընդունելութեան ժամը՝ Ամէն օր 2.30-7.30—Կիրակի եւ տօն օրերը:

**Խնամեցիք ձեր ակումները եւ դիմեցիք**  
ԱՄԵՐԻԿԵԱՆ  
ԱՏԱՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՔԼԻՆԻԲԷ  
12, RUE RICHOMME, 12  
Դարմանումը եւ ատամնաշինութիւնը տեղի կ'ունենայ կարող մասնագէտներու կողմէ, խիստ դիւրամատչելի պայմաններով:  
Առաջին այցելութիւնը ծրի  
Հարողակցութեան միջոց՝ Métro: Barbès-Rochechouart

**ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ**  
Ազատութեան ճանապարհին, Ա. Այրարեան 25 ֆրանք, Ազգային շուքեր, 8. Պարոնեան 20, Ասպետ Լիպարիտ (պատկերազարդ) Վ. Բիւրքեան 40, Արաքսի կամ վարժուցիչ, Ա. Տիւրք 15, Աւետարաններ (Ձոր) Ղ. Եւրոպ. Կուրեան 12.50, Բաւարան հայ. գաղ. Լուսինեան 60, Բաւարան գաղ. հայ. Կուրեան 60, Կիւր, Համաստեղ 30, Երգարան (Արարատ) զբայանի 12.50, Երգարան ժողովրդ. կոմիտեայ վարդ. 2 մաս 25, Խորհրդաւոր աղջիկը եւ իր գաղտնիքը, Սարուսան 25, Խորհրդեան Հայրիկ Թ. Ե. Գ. 30, Խօսակցութիւն հայ. գաղ. հայերէն հնչումներով 15, Խօսակց. հայ-անգլ. հայերէն հնչումներով 15, Խօսակց. հայ-գերմ. 15, Հայոց հին գեղարուեստի վարպետներ Կ. Յ. Բաւարեան 15, Հայաստանի (հին) քարտէսը 1.50, Համբարձր. հայերէնի զրոյցներ, Ա. Այրարեան 25, Կարեկ. եպիս. Խաչատուրեան 40, Նամակների ընդարձակ ընտանեկան-առեւտրական 15, Պատմութիւն Հայոց պատկերազարդ, Բատրի, Բամաշեան 7.50, Պատմութիւն Հայոց պատկերազարդ, Պալասանեան 30, Պիւրիտան, Դէյի աշտարակին հերոսը, Մ. Զէվարդ 2 հատոր 25, Բուստանայի հասարակ. զարգացումը 1901—1918 65, Բանաստեղծութիւն Յ. Թուրմանեան 30, Սամեիկի եւ Տրդատ 12.50, Սիմօն եւ Գրիգոր 6 հատոր 40, Գալիլէոյի (Ձար) գուշուկ 16, Գալիլէոյի վարպետը կ'ընէ 15, Գրիտամիոր Միքայէլեան Ա. Ա. հարոնեան 12.50, Յրամասնայ տարեգիրք 1927ի 20, Larousse (Petit, Diction éditonnaire, 1927) 40 ֆրանք:

... .. ՏՊԱՐԱՆ ... ..  
== ՄԱՍԻՍ ==  
.... .. ՓԱՐԻՋ .... ..  
Imprimerie MASSIS  
208 bis RUE LAFAYETTE  
: : PARIS (10<sup>e</sup>) :

**ՍԱԿԱՐԱՆ**  
28 Յունուար 1927  
ԳՐԱՄՈՒՆԵՐ  
Սթերլին, L. St.  
Տոլար, Dollar  
Մարք (ոսկի), Mark  
Պրքական թղթ, L. Trq.  
Պրք. ոսկի " or  
ՄԵՖիտիէ Medjidie  
Լէվա 100 հատոր Léva  
Տրախի " Drachme  
Լիբ " Lite  
Պիլ. ֆրանք " Fr. Belge  
Չուից. " Fr. Suisse  
Լէվ 100 հատոր Ley  
Չեկոսեց (10 Roubles or)

**ՏՐԱՐԱԿՐԵԼԻ ՄՊԱՏՈՒՅԻ**  
Տեսական եւ խոստանոցի աշխատանքներու համար: Դիմել՝ «Յառաջ»-ի վարչութեան:  
Comptoir Parisien de change et de Crédit  
80, Rue Lafayette

**ՀԱՅՐԵՆԻՔ**  
— ԵՄՍԵԳԻՐ —  
Հասցէ. — 13-15, Shawmut St. Boston, Mass. (U. S. A.)

IMPRIMERIE - MASSIS - ÉDITION  
208bis, Rue Lafayette Paris(10)  
Le Gérant: H. TEURNIE



Table with subscription rates: 3 months, 6 months, 1 year. Prices in Armenian Lira (L.) and Franc (F.).

"HARATCH"

Director-Propriétaire: SCHAVARSCH MISSAKIAN. Rédaction & Administration: 208 bis, Rue Lafayette - PARIS (10e). Téléphone: NORD 57-82. Métro: LOUIS-BLANC ou JAURÈS.

Publication details: 4th year, 30th issue, January 30, 1927. Price: 50 Lira.

ՈՒԺԱՍՊԱՌ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Ուրբաթ օր հրատարակեցինք ամբողջ Անդրկովկասի նոր մարդահամարը, եւ Հայաստանի մանրամասն ցուցակն ալ առանձին, ճիշտ այնպէս ինչպէս տպուած էր «Սորհրդային Հայաստանի մէջ» (15 Յունուար):

Ինչպէս կը հաստատէ Անդրկովկասի վիճակագրական կեդր. վարչութիւնը, Հայաստանի բնակչութեան ընդհանուր թիւն է 867,546 հոգի, որոնց 437,651ը այր, 429,895ը կին: Ամբողջ բնակչութեան մէջ քաղաքացիները կը կազմեն 157,804, զիւրացիները՝ 709,742 հոգի:

Այս պաշտօնական թիւերը երեւան կը հանեն տխուր իրողութիւն մը. ներկայ Հայաստանի բնակչութեան նուազումը: Մենք տակաւին առիթ կ'ունենանք առանձին ուսումնասիրութեամբ պայտուցանելու այս պարագան: Այսօրուան համար, եւ խմբագրականի մը սահմանին մէջ, կը բաւէ յիշել քանի մը կէտեր:

1920ին, Հայաստանի բնակչութիւնը կը հաշուէին 1,200,000, որուն 40-50,000ը միայն օտար էին: Զեղչելով կարսի եւ Իլդիւրի շրջանները (որ արդէն չկան նոր մարդահամարին մէջ), ու նաեւ պատերազմի ատեն շարժուածները, նորէն կարելի չէ բացատրել պակասը: Որովհետեւ, ոչ միայն թուրքերու ձեռքը անցած գաւառներուն բնակչութեան մեծ մասը Հայաստանէն ապաստանեցաւ, այլ եւ 1922ին 1925ի վերջը արտասահմանէն 17,452 գաղթականներ հայրենիք դաձած էին, համաձայն ներքին գործադրութեան գաղթ. բաժնի տեղեկագրին: Ասոնց վրայ պէտք է աւելցնել, նաեւ, 1926ի սկիզբը Յունաստանէն փոխադրուած 3000 հայրենակիցները:

Ուրիշ բաղադրութիւն մը. Հայաստանի վիճակագրական վարչութիւնը անցած տարի հրատարակեց տեղեկագիր մը, որուն համաձայն 1922ին բնակչութեան թիւն էր 781,111, 1923ին՝ 841,043. 1924ին՝ 907,755: Իսկ 1926 Մայիսի 29ին, «Ս. Հ.» կը հրատարակէր նոր վիճակագրութիւն մը, որուն համաձայն մինչեւ 1926 Յունուար 1 Հայաստանի բնակչութիւնն էր 925,546 հոգի (745,884ը զիւրական վայրերու մէջ, 25,799ը աւաններու, 153,863ը՝ քաղաքներու մէջ):

Տարբեր առիթով մը, Հայաստանի վիճակագրական վարչութիւնը երկրին բնակչութիւնը կը հաշուէր մօտ մէկ միլիոն, որուն 81,000ը թուրք-թաթար, 21,800ը ռուս, 16,400ը գաղազան ազգերէ, համազումը 127,400 օտարական:

Տակաւին իստեցանք ծնունդներու ամսան մասին, որ ամէն ամսու կը ծանուցուի մանրամասնօրէն, գաւառ-գաւառ: Միայն 1925ի առաջին վեցամսեային, այդ ամսու եղած էր 19,820 հոգի, եւ համեմատութիւնը միշտ ալ հարիւրին 3էն պակաս չէ:

Ուրեմն, հիմք բռնելով միայն 1926 Յունուար 1ի վիճակագրութիւնը, կը տեսնենք որ Հայաստանի բնակչութիւնը պակաս է 58,000 հոգի (925,546 հոգի՝ 1926 Յունուար 1ին, 867,546 հոգի՝ 1927 Յունուար 1ի մարդահամարով): Գիւղի եւ քաղաքի վրայ հաշուելով, կը հետեւի թէ մէկ տարուան մէջ 36,142 հոգի պակաս է զիւրական վայրերէն, իսկ 21,858 հոգի՝ քաղաքներէն:

Եւ ասոնք՝ մասնակի հաշիւներ են տակաւին: Կրնայինք առանձին գաւառներ ալ բաղադրել. ինչպէս Զանգեզուրի շրջանը, որ առաջ 100,000 բնակիչ կը հաշուէր, իսկ նոր մարդահամարը կը ցուցնէ 64,676. Գարալագեաղի գաւառը, զոր 38-40,000 կը հաշուէին անցեալ տարի, իսկ այժմ նշանակած են 28,494 հոգի:

Բայց աւելորդ է խնդրել նոր թուանշաններով: Եղածն իսկ շատ է, հաստատելու համար ինչ որ զիտել տուինք առաջին ամթիւ. Հայաստանի բնակչութեան նօսրացումը, հետեւաբար եւ երկրին տկարացումը:

Ի՞նչ են այս կացութեան պատճառները: Կ'ուզէինք որ երեւանի վարիչները իրենք պատասխանէին, եւ լուսբանէին արտասահմանի գաղութները, որոնք հայրենիքի կորստով կը մաշին, եւ պատրաստ են ամէն աշակցութեան, բայց կը հանդիպին համր բերաններու եւ կղպուած դռներու:

Առաջին պատճառը, անշուշտ, երկրին շնորհուած «անկախ» իշխանութիւնն է, որ իր «պատուութեամբ» իսկ մինչեւ Ռուսաստանի խորքը քշել կուտայ հայրենիքի գաւառները: Երկրորդ՝ տնտեսական կազմալուծումը, որ կը ծնի նորէն այդ գաղութն, իշխանութեան, եւ փոխանակ հայրենիքին կապուած գաղացիներու քաղաքացիներ, ասպարէզ փնտոնի կուտայ ուրիշ գաղութներու տակ: Ատենին հերքեցին արտագաղթի (մասնաւորապէս Զանգեզուրի շրջանէն) լուրը, բայց հաստատել իրենց նշանակած թուանշանները կուտան հերքումին պատասխանը:

Երրորդը, չորրորդը: Բայց երկար պատմութիւն է: Անգամ մը չարաշուք իրականութիւնը պարզել յետոյ, կարելի է հատ-հատ վար առնել այս ողբերգութեան բոլոր վարադրները, որպէս զի ամէնէն միամիտներն ալ «այօք-բայօք» տեսնեն թէ ինչպէս հետզհետէ գունատ եւ ուժասպառ վիճակ մը կը ստանայ Հայաստան աշխարհը, առանց ներքին կամ արտաքին պատերազմներու, կատարեալ խաղաղութեան եւ կապարեալ շուտեան մէջ...:

ՅԵՂԻՆ ԶԱՅՆԸ

Փարիզէն վերադարձող պարոն մը «Նոյս Գաղաք»ի հրաշալիքներէն կը ճտեղ մեղի, անցեալ օր: Արագ ու սրբնթաց կեանքէն Շուտայ ու յանկուցիչ ապրուանքէն: Վէրայայէն: Ճարտասական ստեղծագործ հանձնարէն ու քաղաքակրթութիւնէն:

Յանկարծ, սրճարանի մը անկիւնէն, վրդովուն ու կարուկ ձայն մը երկարեցաւ մեզ: Դարձանք Տարէք, ու յեղափոխական կեանքէն մէջ կը թռուած «գաւառացի» ընկեր մը, որ, դարձեալ աչքերուն, եւ խօսքը ուղիղով հմայուած պարոնին:

— Էնտեղ, ուր կը պատմես թէ հանձնարն ու միտքը կը տերին, Մօսկօյնը կան, հարցոյց:

— Ինչպէս, ի՞նչ Մօսկօյ, վրայ բերաւ միտք:

— Մօսկօյ, այժ տղայ: Սա արեւարբու եւ կատարող խումար ապրելի է այդ երկրի սահմաններուն շուրջ:

— Ո՛չ:

— Քիւրտե՛ր: Թաթարնե՛ր:

— Երբե՛ք:

— Թուրք ու ռուս պետութիւննե՛ր:

— Ի՞նչ հարկէ՛ ո՛չ:

Զարմացած կը սպասէինք եւ ջրին ի՞նչ «անըմբռնելի» հարցումներ էին: Լո՛ւն էինք, մինչ մեր ընկերը թաւալող հեւք մը կուրծքին տակ դանդա՛ղ մօտեցաւ նկարագրող պարոնին, ու, զրեթէ ըմբոտ:

— Ձեր այդ վէրայայները, համալսարանները, կանգնած կոթողներն ու արձանները, «Յարթութեան կամարները զմայլեցնող հանձնարն ու քաղաքակրթութիւնը շատ աւելի նոսր են ուղիղի են իմ աչքին, քան Տարսիզի կարէն անպայցած աւերակներն ու Ալազանի յարդէ հայ խրճիթը: Ես՝ իմ այս պէտք ու անհար զիջութեանս մէջ շատ աւելի հպարտ կը կանգնեմ, քան ձեր շիւկօներն ու Փասթիւռները: Իմ տեսողութեանս առջեւ տրեխաւոր Ադրբեյ-Սեբերներն ու Գլորը Զափուշները շատ աւելի հոյակապ ու շքեղ կը բարձրանան, քան ձեր աշխարհակալ նաբօլէտները... Ու ինձի համար, պարոններ, Մօսկօյներուն, Քիւրտներուն, Թաթարներուն, Թուրք ու ռուս պետութիւններուն, եւ հինգն ու նոթէն եկող ու զացող արշաւանքներուն դէմ, միս մի. նակ, Ասիոյ խաւարակուտ այդ անկիւններուն մէջ իր գոյութիւնը դեռ կանգուն պահող հայ ժողովուրդը շատ աւելի մեծ է եւ սքանչելիք, քան՝ ձեր եւրոպաները, որոնք ուսմանք ու անհր են բարտաւար երկիրներուն տակ... Որոնք, իրենց միտքն, ու մեղքնէն շատ վերջ ծնող քաղաքակրթութիւնը անկաշկանգօրէն գարգացուցին են, մինչ մենք՝ արեւմտեան խումաներուն ճամբուն վրայ՝ ստիպուե՛ր ենք փոխ մեր հանձնարք, յարատեւօրէն կոտորուելու եւ մահանալու ենթակայ...»

Շնորհ էինք: Յեղին ձայնն էր: Արգասութեան ձայնը: Ու սա քաղն ու երկաթէ արձաններուն դէմ՝ արիւնք ու դանկերէ բարձրացող հայ հանձնարն ու հայ հասարակն անխորտակելի արձանը...:

Շնորհ էինք: Յեղին ձայնն էր: Արգասութեան ձայնը: Ու սա քաղն ու երկաթէ արձաններուն դէմ՝ արիւնք ու դանկերէ բարձրացող հայ հանձնարն ու հայ հասարակն անխորտակելի արձանը...:

Շնորհ էինք: Յեղին ձայնն էր: Արգասութեան ձայնը: Ու սա քաղն ու երկաթէ արձաններուն դէմ՝ արիւնք ու դանկերէ բարձրացող հայ հանձնարն ու հայ հասարակն անխորտակելի արձանը...:

Շնորհ էինք: Յեղին ձայնն էր: Արգասութեան ձայնը: Ու սա քաղն ու երկաթէ արձաններուն դէմ՝ արիւնք ու դանկերէ բարձրացող հայ հանձնարն ու հայ հասարակն անխորտակելի արձանը...:

Շնորհ էինք: Յեղին ձայնն էր: Արգասութեան ձայնը: Ու սա քաղն ու երկաթէ արձաններուն դէմ՝ արիւնք ու դանկերէ բարձրացող հայ հանձնարն ու հայ հասարակն անխորտակելի արձանը...:

Շնորհ էինք: Յեղին ձայնն էր: Արգասութեան ձայնը: Ու սա քաղն ու երկաթէ արձաններուն դէմ՝ արիւնք ու դանկերէ բարձրացող հայ հանձնարն ու հայ հասարակն անխորտակելի արձանը...:

Շ.

ՕՐԸ ՕՐԻՆ

ՎԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԼԱԽՏԵՍ Է

“ՉԵՆՔ ԿՐՆԱՐ ՊԱՐՏԱԴՐԵԼ ՈՐ ՕՏԱՐՆԵՐԸ ՀԵՌԱՆԱՆ, ԲՍՅՅ...”

Ինչպէս գրեցինք երէկ, Երեսփ. ժողովը Ուրբաթ օր երկրորդ անգամ դրադեցաւ գործադրութեան տազնապով:

Առաջին խօսողը եղաւ Ավէրյանի երեսփոխան Ժան Մոլլինի, որ յայտնեց թէ ապրուստի սղութեան պատճառներէն մէկն ալ երկաթուղիի բարձր սակագրիներն են: Երեսփոխան փրէէք խօսեցաւ դրամական խնդրին մասին եւ հարցուց թէ կառավարութիւնը ի՞նչ մտադիր է ընել. ֆրանքը կայունացնել թէ ոսկեդրամի վերադառնալ:

Ընկերավարական երեսփոխան Լրպա գործադրութեան տազնապին վրայ երկար կանգ առաւ եւ բաղադրութիւն մը բրաւ 1920—21ի տազնապին հետ: «Այն ատեն, ըսաւ, տազնապը համաշխարհային հանգամանք ունէր, մինչ այսօրուանը միայն Ֆրանսայի կը վերաբերի: Ո՛չ ոք կրնայ ուրանալ թէ տազնապը կայ եւ արագօրէն կը ծաւալի: Նոյեմբերի կիսուն նպաստը կալ գործադրութիւնը 469 հոգի էին, Դեկտ. 31ին 17,078 եղան, Յունուար 15ին 38,300ի բարձրացաւ, իսկ այսօրուան թիւն է 45,222: Օգոստոսին գործատէրերը բանւոր չէին կրնար գտնել, հիմա հակառակը կը պատահի: 1921ին 91,000 նպաստը կալ անգործներ կային, բայց իրական գործազուրկներուն թիւն էր 529,000:»

Վարչապետ Փուանքարէ դիտել տուաւ թէ պատերազմէն առաջ միշտ կէս միլիոն գործազուրկներ կային Ֆրանսայի մէջ, այսինքն այսօրուանէն աւելի:

Լրպա ըսաւ թէ ուրիշ երկիրներու մէջ ալ գործազուրկութիւն կալ, օրինակ, Նոյեմբերին Գերմանիոյ մէջ 1,309,000 բանւորներ ամբողջովին կամ մասնակի անգործ էին, Անգլիոյ մէջ՝ 1,636,000 բանւորներ, Ռուսիոյ մէջ՝ 1,120,000: Ֆրանսա զեռ այդ վիճակին չէ հասած, բայց պէտք է մտածել վարուան համար: Ի՞նչպէս: Ֆրանքը պէտք է կայունացնել, բայց անկէ առաջ կառավարութիւնը պէտք է որոշ տեղեկութիւններ տայ անգործներուն գործ հայթայթելու համար կատարուելիք շինութեանց մասին: Յետոյ պէտք է հասկնել գործատէրերուն որ լաւագոյն է աշխատանքի ժամերը կրճատել քան գործաւորներ արձակել. մինչդեռ գործարաններ կան, ուր յաւելուածական ժամերով կ'աշխատին շատ մը բանւորներ:

Ընկերավարական երեսփոխան յետոյ անդրադարձաւ օտար բանւորներուն: Պատերազմէն ետք, ըսաւ, Ֆրանսա կոտորակուած, լայն բացաւ իր դուռները դուրսէն եկող բանւորներուն առջեւ: Բայց այս բացառիկ կացութեան բացառիկ միջոցներ պէտք են: Ներկայիս 1,600,000 օտար բանւորներ կան Ֆրանսայի մէջ (— Պաշտօնական թիւր 1,450,000 է, ճշտեց Փուանքարէ): Պատերազմէն առաջ 500,000 միայն կար: Տարւոյն սկիզբէն ի վեր 239 օտարական մտած եւ 2336 մեկնած են: Ասիկա բաւական չէ: Պէտք է փակել դուռները օտար բանւորներուն առջեւ, որքան ատեն որ աշխատանքի չուկան խրոնուած է: Ցաւալի է որ հողատէրերուն ընդդիմութեան պատճառաւ օտար բանւորներու պարագան չէ յանձնուած միակ կազմակերպութեան մը հովանաւորութեամբ Աշխատանքի նախարարութեան:

Երեսփոխանը աւելցուց որ կառավարութիւնը բաւարար չափով չօգնեք գործազուրկներուն. իր բաժինը հազիւ 100ին 20ի կը հասնի եւ պահանջեց որ աւելի մեծ տոկոսով մասնակցի:

Աշխատանքի նախարար Անտրէ Ֆալիքը պատասխանելով հարցապնդումներուն, ըսաւ թէ ներկայ տազնապին անմիջական պատճառները կապուած են 1921ի տազնապին հետ: Այսօր, ինչպէս այն ատեն, յաճախորդը կը սպասէ որ զինքը ի յանն, որով առեւտրական ալ պարենաւորուելու համար չի դիմեր գործարաններուն: Ներկայ կացութեան պատճառն այն է որ Նոյեմբերին մեծաքանակի զինքը ինկան: Այսօր յուսալի է որ այդ անկումը կասի եւ գործերը վերսկսին: Ներկայիս 45,222 նպաստը կալ անգործներ կան, սակայն 1921ի եւ ուրիշ երկիրներու հետ բաղադրուած շատ չնչին է այս թիւը: «Գալով օտար բանւորներուն, անոնց ջրանաւ մուտքին արգիւտը բաւական չլրջով, նկատի առած ենք անցազրի գրութիւնը վերահաստատել: Սակայն կրնանք դուրս հանել ներկայիս ջրանաւ գտնուող օտար բանւորները: Եթէ խնդրը անբարձրակիւնութեան մասին ըլլայ, բնական է թէ այդ: Ասիկա կարգապահական միջոց մըն է, որուն դիմելու չպիտի վարանի կառավարութիւնը: Սակայն իրական բանւորներու համար պայմանագրութիւններ կան, զորս պարտաւոր ենք յարգել: Հետեւաբար չենք կրնար խտուրտեան դիմել, բայց համոզուով պիտի դիւրացնենք անոնց հայրենիք գաւառներու միջոցները: Աշխատանքի քննիչներուն պաշտօն տուած ենք յիշեցնել գործատէրերուն, որ ոչ մէկ պարագայի մէջ պէտք չէ արձակել ֆրանսացի բանւորները՝ պահելու համար օտարականները:

Պատկանութիւնը թափանցիկ շաղկիւններ բաւարար չի գտաւ գայթակղութիւնը ծածկելու համար, եւ խիստ հրամաններ տուաւ:

Ոսկի եւ արծաթ.— Պարս Երեսփոխան անցած շաբթուան ընթացքին 47 միլիոն ֆրանքի ոսկի եւ արծաթ գնեց: Այս ձեւով մինչեւ հիմա դրած է մէկ միլիոն 184,460,762 ֆրանք արժէքով ոսկի, արծաթ եւ օտար դրամներ:

(Լուրերու շարունակութիւնը կարգալ Գ. Էջ)





